№ 57 ՈՒՐԲԱԹ, 16 ՄԱՐՏԻ

1912

ՈՒՐԲԱԹ, 16 ՄԱՐՏԻ № 57

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ՄԱՐՏԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 9 ՌՈՒԲ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱԶԴ

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ

Ամսիս 19-ին, երկուշաբթի, երեկոյեան ժամը 7-ին, Բօրսայի դահլիճում նշանակված է խորհրդակցութիւն՝ Թիւրքահայերի համար բարեգ. ընկերութիւն կամ Եգիպտոսի Հայկական Բարեգ. Ընդհ. Միութեան ճիւղ բանալու հարցի քննութեան, կանոնադրութեան մշակման և կառավարութեան ներկայացնելու համար։ Ցանկացողները մասնակցել այդ խորհրդակցութեան՝ կարող են մուտքի տոմսակ ստանալ Հ. Առաքելեանից, դիմելով «Մշակի» գրասենեակը։
առ. 168. 3—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Բաժանմունքը Թիֆլիսում, Գոլ. պր. 21, տուն Արտիստական Ընկ., տելեֆոն № 355.
Պահեստումս կան մեծ քանակութեամբ ընտիր պաստառներ ամենավերջին ստիլով,
ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կոպ. սկսած մինչև 6 ռ. իւրաքանչիւր ռուլօն։ Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում։
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՁՐԻ։
(և.ու.) առ. 154. 50—3

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։
Սրսկումներ նաև տուբերկուլիններով։
Ընդունելութիւնը ամեն օր՝ առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Католическая ул. д. № 10. Տելեֆոն № 792.
(չ.ու.) առ. 989. 100—97

ԻՆՉՈՎ ՅԱՒԵՐԺԱՑՆԵԼ

II

Եթէ սպասելու լինենք, մինչև որ մեր երաժշտագէտներից մէկն ու մէկը ձեռնարկի այն գործին, որը նախաձեռնել էր Քրիստափոր Կարա-Մուրզան, գուցէ շուտով չը տեսնենք իրական գործ հրապարակի վրա։

Ինքը խմբական երգեցողութեան երաժշտագիտական զբաղմունքը դեռ այն կարգի պարապմունքներից չէ, որին վստահանան դիմել շատերը այն անձերից, որոնք ցանկանում են տեսնել իրանց աշխատանքը փոքր ի շատէ լաւ վարձատրված։ Քրիստափոր Կարա-Մուրզան սիրում էր իր գործը, ոգեւորված էր նրա գաղափարով և նրա համար յանձն էր առնում զրկանքներ և նեղութիւններ։

Եթէ այժմ ինքնաբերաբար հանդէս չեն գալիս գործողներ կարևոր նպատակը իրականացնելու համար, անհրաժեշտ է, որ ինքը հասարակութիւնը իր ներգործական աջակցութեամբ նպաստի գործի աջողութեան։

Այդպիսի նախաձեռնութիւն կարող էր վերցնել իր վրա, օրինակ, Հայ Դրամատիկական Ընկերութիւնը, որի շնորհիւ Թիֆլիսում պահպանվում է հայ թատրոնը։

Ընկերութիւնը, հրաւիրելով ձեռնհաս երաժշտագէտի և ապահովելով նրա աշխատանքը մի քանի տարով, սկիզբը դրած կը լինի գործի, որը այնուհետև կը սկսի զարգանալ և գուցէ կը գտնի ինքնուրոյն գոյութեան հաստատ ճանապարհ իր համար։

Ահա մի քանի տարի է, որ Թիֆլիսում խօսվում է հայ երաժշտագիտական մի ընկերութիւն կազմելու խնդրի մասին։ Եղան ժողովներ, մշակվեցին կանոնադրութիւններ. բայց ոչ մի կազմակերպութիւն առաջ չեկաւ։ Երկար ժամանակ կը խլէր, եթէ բացատրէինք, թէ ինչու չը կազմվեց այդ ընկերութիւնը, բայց հաստատ է այն, որ ընկերութիւն կազմել ցանկացողները բաւականաչափ յարմարութիւններ և նպաստաւոր պայմաններ չը գտան և ներքին եռանդ էլ չունեցան յղացած միտքը գործի վերածելու։

Այն, ինչ որ չենք արել մինչև այժմ, անհրաժեշտ է անել գոնէ ներկայումս։

Քրիստափոր Կարա-Մուրզայի մահվան տասնամեակի լրանալը թող յանդիմանական մի հանգամանք դառնայ մեզ համար, իսկ նրա երգերի գեղեցիկ համերգը մի խրախուսական առիթ ծառայի գործի ձեռնարկելու։

Կենդանութիւն տալով Քրիստափոր Կարա-Մուրզայի սկսած և սիրած գործին, մենք արժանաւորապէս յաւերժացրած կը լինենք անմոռանալի երաժշտագէտի յիշատակը։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

14 մարտի

Պետերբուրգ.—Ցարսկոե-Սելօյի մեծ պալատում կայսրին բաղդ ունեցան ներկայանալու բարձր կրթական հաստատութիւնների ճեմարանական կեանքին աջակցող ընկերութեան անդամները՝ գլուխ ունենալով Պ. Խորհրդի անդամ Դէյտրիխին, և առաջին համալսարանական ակադեմիական համագումարի ուսանող պատգամաւորները թըւով 78։ Կայսրը անցաւ ներկայացողների առաջից, արժանացրեց ողորմած հարց ու փորձի, բարեհաճեց դիմել ուսանողներին ամենաողորմած խօսքերով և ցանկացաւ նրանց աջողութիւն իրանց գործունէութեան մէջ։ Երախտապարտութիւնը կայսրի խօսքերին ցնծագին ուռա բացգանչեց։ Կայսրի հեռանալուց յետոյ պալատի դահլիճներում ներկայացողներին տրվեց նախաճաշ։

Կայսրը այցելեց կայսերական Հնագիտական մասնաժողովը և նայեց 1911 թ. մասնաժողովի ձեռք բերած հնութիւնները։

Կայսրին բաղդ ունեցաւ ներկայանալու Կայսերական Գիտութեանց Ճեմարանի պատգամաւորութիւնը փոխ-նախագահ Նիկիտինի առաջնորդութեամբ։

Արտաքին գործերի մինիստրի մօտ կայացաւ շքեղ խնճոյք, որին ներկայ էին աւելի քան 1000 հրաւիրվածներ։ Ներկայ էին մինիստրներ, դիպլոմատիական մարմինը, Խորհրդի և Դումայի անդամները։

—

Հէլսինգֆորս.—Երէկ ֆինլանդական գեն.-նահանգապետի դիւանատան յոբելեանի օրը «Ֆէննիա» հիւրանոցում կայացաւ գեն.-նահանգապետի դիւանի պաշտօնեաների կազմած հանդիսաւոր ճաշը։ Գեներալ-նահանգապետի առաջարկած բաժակը Ռուսական Երկրի ինքնակալ Տիրոջ առողջութեան արևշատութեան համար ընդունվեց երկարատև ուռաներով ու ազգային օրհներգով։ Նոյն կերպ կայսրուհիների, Գահաժառանգի և Թագաւորող Տան համար առաջարկված բաժակաճառերից յետոյ, գեն. նահանգապետ գեն.-լէյտ. Զէյն բաժակ առաջարկեց դիւանատան պաշտօնեաների համար, և ցանկանալով բարգաւաճում, ընդգծեց գեն.-նահանգապետ Բօբրիկօվի ժամանակ եղած փոփոխութիւնը, երբ դիւանատունը տեղականից դարձաւ պետական և ռուսական շահերի արթուն պահապան կանգնեց։ Պատասխան ճառի մէջ դիւանապետ Բօրօվիտինօվը ի միջի այլոց ասաց, որ պետական խոշոր սխալ պէտք է համարել այն, որ 90 տարի շարունակ դիւանատան բոլոր պաշտօնները լրացվում էր բացառապէս տեղական մարդկանցով։ Սակայն գեն.-լէյտենանտ Զէյնի դիւանատան կեանքը պատմական դերի փոխվեց։ Պէտք է աջակցել նրա խոշոր ստեղծագործական աշխատանքին յանուն այն բանի, որպէսզի ամբողջ Ռուսաստանում տիրող տարրը ռուսները լինեն։

—

Կիև.—Նոր բիպլանով Լ. Ա. Սիկորսկին չորս մարդկանց հետ 100 վերստ տարածութիւնը անցաւ մի ժամում, սահմանելով բոլոր սիստեմների աէրօպլանների արագութեան համաշխարհային մրցակէտ։

—

Խօյ.—Քիւրդերը, մտադրվելով փակել մուտքը դէպի Սոմայ, գրաւեցին Կաբակտենէախեան և Ջէվօջիկ գիւղերը։ Կապիտան Կիսլին, որ անցնում էր ձիերով հինգ պահակների հետ, ենթարկվեց քիւրդերի ապարդիւն հրացանաձգութեան Ախիան գիւղի առաջ։

—

Լօնդօն.—Համայնքների պալատ։ Ուինստօն Լօնգի ճառի ժամանակ խորհրդակցութիւնից վերադարձաւ Ասկվիտը և անմիջապէս յայտնեց, որ կառավարութիւնը մնում է իր նախկին վճռի մէջ և ոչ մի թիւ չէ մտցնում մինիմալ աշխատավարձի օրինագծի մէջ (ծափահարութիւն). աւելի լաւ է որոշել վճարը առանձին ամեն մի հանքային շրջանում։ Մինիստրը առաջարկեց երկու կողմերին առանձին-առանձին քննել այդ հարցը, որը սակայն չընդունվեց։ Կառավարութիւնը բանակցութիւնները յետաձգեց։

Պալատը 326 ձայնով ընդդէմ 83-ի մերժեց բանւորական կուսակցութեան առաջարկութիւնը որոշելու մինիմալ աշխատավարձը հինգ շիլլինգ։

Հանքատէրերի և բանւորների խորհրդակցութիւնը արտաքին գործերի մինիստրութեան մէջ տևեց ընդամենը հինգ րօպէ։ Շոտլանդայի բանւորները պահանջեցին հինգ շիլլինգ և ինն պէնս մեծ բանւորների և երեք շիլլինգ փոքրահասակների համար։ Այն ժամանակ հանքատէրերը դուրս գնացին։

Համայնքների պալատը 213 ձայնով ընդդէմ 48-ի ընդունեց մինիմալ վճարի օրինագիծը երրորդ ընթերցումից յետոյ։ Բանւորական կուսակցութիւնը ձայն տուեց հակառակ։

—

Բեռլին.—Շպրէ գետի տակով էլեքտրական գիծ անցկացնելու աշխատանքների ժամանակ առաւօտեան ամբարտակը փլվեց։ Ջուրը տարածվեց գետնի տակ մի քանի կիլօմետր երկարութեամբ։ Երթևեկութիւնը մինչև գծի պատրաստ մասը կանգ առաւ չորս շաբաթով։ Վնասները բազմամիլիոն են։

—

Բեռլին.—Րայխստագի բիւջէտային մասնաժողովի մէջ արտաքին գործերի մինիստրի օգնականը, շօշափելով Չինաստանի յեղաշրջման հարցը, յայտնեց, որ գերմանական կառավարութիւնը միւս մեծ պետութիւնների հետ լիակատար համերաշխութեամբ հետամուտ է չը միջամտելու սկզբունքին. անհրաժեշտութեան դէպքում նա պատրաստ է միասին գործելու, սակայն կը դիմադրէ չինական պետութիւնը բաժանելու ամեն մի փորձի։ Տնտեսական տեսակէտից պէտք է ապահովվի նաև բաց դռների քաղաքականութիւնը։ Մինիստրի օգնականի յայտարարութիւնը գոհացրեց մասնաժողովին, որ 650,000 մարկ յատկացրեց Չինաստանում պահպան զօրքերի թիւը աւելացնելու համար։ Ցօգուտ յատկացման ձայն տուեց սօցիալիստների մի մասը։

—

Բրիօնի.—Առ. ժամը 11-ին եկաւ «Հօհենցօլէրն» զբօսանաւը, որի առիթով աւստրո-ունգարական նաւերից պարպեցին 30 թնդանօթ։ Արքիդուքս Ֆրանց Ֆէրդինանդը գերմանական ծովակալի զգեստով մտաւ զբօսանաւը և սրտագին ողջոյններ փոխանակեց կայսրի հետ։ Յետոյ կայսրը ուղեկիցների հետ միասին ափ իջաւ։ «Կարմէն» հիւրանոցում կայացաւ նախաճաշ, ապա կղզու վրայով աւտոմօբիլներով գնացին և դիտեցին բերդերը։ Երեկ. ժամը $5^1/_2$-ին զբօսանաւը մեկնեց։

—

Բակլէնդ (Իլլինօյս).—Խուժանը քարեր նետեց ոստիկանատան վրա։ Ոստիկանները կրակեցին ամբոխի ուղղութեամբ։ Սպանված են երեք, վիրաւորված են 9 մարդ։

—

Նիւ-Եօրկ.—Նիւ-Եօրկ նահանգում կատարվեցին հանրապետական կուսակցութեան պատգամաւորների ընտրութիւնները ազգային կօնվէնտի համար։ Բոլոր տեղերում ընտրվել են Տաֆտի կողմնակիցները։ Րուզվէլտի կողմնակիցները գտնվում են փոքրամասնութեան մէջ։

—

Պրագա.—Հիւսիսային Չեխիայի քարածխային աւազանում չեն աշխատում 30,000 բանւոր։

—

Պիշէվէր.—Հրդեհը ոչնչացրեց 300 տուն։

—

Բլիւֆիլդս (Արևմտեան Վիրգինիա).—Հանքում պայթումից սպանվեցին 82 բանւոր։

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

14 մարտի

Կ. Պոլիս.—Բ. Դուռը չէ հաստատում այն լուրերը, թէ իտալական նաւատորմը նորից երևացել է Դարդանէլի առաջ։ Համաձայն Բ. Դրան ստացած տեղեկութիւնների, ծովի վրա նկատվել են սոսկ իտալական մի քանի նաւեր, որոնք դիմելիս են եղել դէպի Կիպրոս։

Սալօնիկ-Մօնաստիր երկաթուղագծի վրա Ֆլօրինայի մօտերը գտել են երկու ռումբ։

—

Հռոմ.—Պաշտօնական շրջաններում հաստատում են, որ Վենետիկում երկու միապետների տեսակցութեան ժամանակ խօսակցութեան նիւթ ծառայեց Թիւրք-իտալական միջադէպը։ Սակայն կարծվում է, որ միապետների խօսակցութիւնը չի ազդի պատերազմական գործողութիւնների վրա։ Խօսում են, որ հաշտութիւնն անկարելի է, ընդհակառակը պատերազմը մինչև Զատիկ սուր ձև է ստանալու։ Նաւատորմի գործողութիւնները Թիւրքիայի եւրոպական և ասիական ափերին սկսվելու են մօտիկ ապագայում։

Պարլամենտի մի խումբ պատգամաւորներ դիմում են Տրիպօլիս՝ պատերազմական գործողութիւնների ընթացքի հետ ծանօթանալու համար։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

14 մարտի

Տօկիօ.—Վերին պալատը մերժեց նոր ընտրական օրէնքը, որով աւելանալու էր պատգամաւորների թիւը։ Պալատների երկպառակութիւնը առիթ է տալիս խօսելու պէրերի իրաւունքները սահմանափակելու մասին։

Ստորին պալատում կարդացվեց արտաքին գործերի մինիստրի պատասխանը չինական գործերի առիթով ուղղված հարցապնդման։

Պատասխանի մէջ պարունակւում է մինիստրի հետևեալ յայտարարութիւնը. «Ճապօնական կառավարութիւնը, ունենալով Հարաւային Մանջուրիայում յատուկ իրաւունքներ ու շահեր, ինչպիսիները ունի Ռուսաստանը Հիւսիսային Մանջուրիայում, գտնվում է ռուսաց կառավարութեան հետ մտքերի մշտական փոխանակութեան մէջ վերոյիշեալ իրաւունքները և շահերը պաշտպանելու հարցերի առիթով»։

—

Տօկիօ.—Նագասակիում վառօդային գործարանում պայթումից սպանվեցին 5, վիրաւորվեցին 5 մարդ։

—

Մուկդէն.—Մի խումբ խունխուզներ գրաւեցին Կուապինեան քաղաքը։ Սպանվեց գաւառապետը, կողոպտվեցին կառավարական հաստատութիւնները։ Այստեղից մեկնեց մի հեծելազօր։

—

Պարիզ.—Չինական փոխառութեան հարցի առիթով «Տանին» հեռագրում են Պետերբուրգից. «Ճապօնիայի հանդէս գալը փոխառութեան հարցում դեռ չէ նախորոշում Ռուսաստանի մասնակցութիւնը։ Այստեղ մեծ յոյս են դնում ֆրանսիական կաբինէտի աջակցութեան վրա։ Եթէ Ռուսաստանի պայմանները՝ վերաբերեալ համաձայնութեան չընդունվեն, այն ժամանակ Ռուսաստանը չի մասնակցի փոխառութեանը։ Սակայն վերջին հանգամանքը չէ նշանակում, թէ մեծ պետութիւնները կարող են առանց Ռուսաստանի վերակազմել Չինաստանի ֆինանսական մասը, որի հետ կապված է միջազգային վերահսկողութեան կարևոր հարցը»։

ՀԱՅԵՐՆ Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ

Պարսկա-Հնդկաստանի առաջնորդ Սահակ արքեպ. Այվազեան, որի աթոռանիստ վայրն է Պարսկաստանի Նոր-Ջուղա քաղաքի Ամենափրկչեան վանքը, հրաւէր ստացած էր Հնդկաստանի Դէլհի քաղաքն երթալով ներկայ գտնուելու Անգլիայի Ջօրջ Ե. թագաւորի և Մէրի թագուհիի թագադրութեան հանդէսներին։ Այդ ժամանակ Պարսկաստանի ներքին խառնակութիւններին պատճառով գեր. Այվազեան չկրնալով մեկնիլ՝ հեռագրով յայտնեց իր շնորհաւորութիւններ և բարի գալստի մաղթանքներ։

Անգլիայի թագաւոր և Հնդկաստանի կայսր Ջօրջ Ե. իր շնորհակալութիւն յայտնելու համար հայերի առաջնորդին, իր և թագուհիին լուսանկարը, իր անձնական ստորագրութեամբ և շատ շքեղ շրջանակի մը մէջ դրուած, ղրկեր է գեր. Այվազեան արքեպ.-ին։ Սպահանի անգլիական հիւպատոսը այդ պատկերը հայերի առաջնորդին յանձնելով, իր շնորհաւորութիւններ և խնդակցութիւններ յայտներ է անոր, թագաւորին գոհունակութեան և այդ պատուաբեր նուէրին արժանացած ըլլալուն համար։

(«Արմէնիա»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջացաւ Թաղիևի նշանաւոր գործը. և դատարանը արդէն վերջացրել է իր դատավճիռը։

Մեզ հետաքրքրողը իսկապէս այդ գործը չէ, այլ խիստ բնորոշ մի երևոյթ, որը գոնէ մեզ վրա սաստիկ ճնշող տպաւորութիւն է թողնում։

Դա Պետական Դումայի անդամներ նշանաւոր և յայտնի կադէտ Մակլակօվի և նոյնքան նշանաւոր ծայրայեղ աջակողմեան Զամըսլօվսկիի հանդէս գալն է միևնոյն գործում և գլխաւորապէս երկու տրամագծօրէն հակառակ ձևով մտածողների՝ միևնոյն մարդու պաշտպանելն է, որ մեզ նման հասարակ մահկացուներին շատ տարօրինակ է թւում։

Մենք շատ լաւ գիտենք Մենշիկօվներից, իշխան Մեշչերսկիներից և նման սև-հարիւրակայիններից, որ աջակողմեանները և ծայրայեղ աջակողմեանները միանգամայն արդարացի և բնական են գտնում ճորտութիւնը, բռունցքին, մահվան դատավճիռը և առհասարակ յանդուգն մտքերի դէմ ամեն տեսակ հալածանքներ։ Նմանապէս նրանք կողմնակից են այն ամեն միջոցներին, որոնցով հնար է փոքրին մեծի առաջ խոնարհ պահել, թոյլին ուժեղի մօտ դողացնել, և առհասարակ ժողովրդին իշխանաւորների առաջ ստրուկ պահելու։

Այս տեսակէտից Զամըսլօվսկիի պաշտպանութիւնը Թաղիևին շատ բնական է, արդարացի, և եթէ կուզէք՝ նա հնարաւորութիւն ունէր դատարանում նոյնիսկ ծայրայեղ աջակողմեանների պլատֆորման ագիտացիա անել, որովհետև Թաղիևը ըստ իր հասկացողութեան մի անմոռանալի և ուրիշների համար օրինակելի դաս է տուել իրանից փոքրերին և այս դաս տալու եղանակը Զամըսլօվսկիի սրտին շատ մօտ է...

Բայց ահա հէնց այս գործում կարդում ենք Մակլակօվի անունը իբրև նոյն գործողի պաշտպան և արդարադատութիւն խնդրող... Ահա այստեղ է, որ մենք իբրև մահկանացու չենք հասկանում կատարվածը։

Մենք Մակլակօվի անունը լսելիս և կարդալիս՝ արդէն մեր մտքի մէջ, մեր աչքի առաջ, մեր լսողութեանը հրեղէն տառերով երևում են գաղափարներ, որոնք ամբողջ առաջադէմ և լուսաւոր Ռուսաստանի գաղափարներն են, որոնք սիրելի, պաշտելի են մեզ ամենքիս համար...

Բայց ահա այդ գեղեցիկ հմայքով զուրգուրված անունը՝ կողքէ-կողք Զամըսլօվսկիի անուան հետ Թաղիևի գործում...

Արժէ, որ մի քիչ մտածենք չորրորդ Պետական Դումայի ընտրութիւնների նախօրեակին...

Շիրին

Ղ. ԱՂԱՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՅԱՐԳԸ ՄԱՀԻՑ ՅԵՏ

Ապշութեամբ կարդացի սինօդի այն կարգադրութիւնը, որով մերժված է անմոռանալի, անփոխարինելի Աղայեանի այրի աղերսը 25 ր. ամսական թոշակատուութիւնը շարունակելու մասին։

Եւ այդ մերժումը տեղի է ունեցել որպէս թէ Խրիմեան կաթողիկոսի կոնդակի տառի զօրութեամբ։

Տեսնում էք, մեղքը հանգուցեալ վեհափառութեանն է եղել. ապա թէ ոչ՝ սինօդը այդ քաջասրտութիւնը չէր ունենայ—մերժել 25 րուբլի. ծեր. Ղազարոս Աղայեանի այրիին և նրա դստրիկին։

Դրէք, աղաչում եմ, դրէք մէջտեղ այն կոնդակի տառը, և մենք այն ժամանակ թերևս նուազ խռովութեամբ նայենք այդ տառը այդքան տառասիրութեամբ գործադրողներից անհուն ցաւով յիշատակելի արարքին։

Այդ տառը տուէք մեզ, և Աստուծոյ արդարութիւնը ձեզ հետ։

Ա. Մ. Եզեկեան

ԳԻՒՂԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

II

Մեր պարբերական թերթերից մէկում Մեծ-Ղարաքիլիսայի ծխական դպրոցի հրդեհի առիթով լոյս տեսաւ մի յօդուած, ուր գիւղի անտեսական-հասարակական ներկայ դրութեան խայտառ անծանօթ, միայն արտաքին, խաբուսիկ տպաւորութիւններից ազդված յօդուածագիրը՝ համարելով ամբողջ գիւղը հարուստ ու ապահով, հաստատ համոզված է, որ հասարակութիւնը եթէ ցանկանայ «ամենայն հեշտութեամբ կարող է իր իսկ բնակիչների մէջ հաւաքել հարկաւոր գումարը», և դատապարտելով հոգաբարձութեան անտեղի և նոյնիսկ անվայել հրապարակային կոչը՝ խորհուրդ է տալիս ընթերցող հասարակութեան «յետ մղել ղարաքիլիսեցիների կողմից արձակված այսօրվայ կոչը, որի մէջ հնչում է ծրիակերի ձայնը»։

Յարգելի յօդուածագրի խիստ յարձակումը միանգամայն արդարացի և տեղին կը լինէր, եթէ այդ համարձակ եզրակացութիւնը բղխած լինէր բուն իրականութիւնից, հիմնված անձնական երկարատև ճիշդ դիտողութիւնների, մանրազնին ուսումնասիրութիւնների վրա և իսկապէս գիւղի բնակչութեան գոնէ հասարակ մեծամասնութիւնը ունենար արդիւնաբեր տնտեսութիւն և տանելի, գոյացուցիչ վիճակ։

Այդպիսի երանելի պայմաններում ճիշդ որ դպրոցի հոգաբարձութեան քայլը ոչ միայն ծրիակերութիւն կարելի էր համարել, այլ և սուր մուրացկանութեան մի նմուշ, հայ հասարակութեան անկեղծ զգացմունքը, մաքուր հաւատը և փոխադարձ օգնութեան անգնահատելի նշանակութիւնը անխղճաբար շահագործելու և ոտնահարելու մի նոր արտայայտութիւն։

Հարուստ, ապահով համարվող գիւղաքաղաքը բարոյական ոչ մի իրաւունք չունէր իր հասարակական-կուլտուրական հիմնարկութեան օգնելու, բարեկարգելու անմիջական գործի ծանրութիւնից փախչել, իրանից հեռացնել, յետ մղել և դրսի հասարակութեան շլինքին փաթաթել։ Այդպէս է թելադրում առողջ տրամաբանութիւնը և մանաւանդ հասարակական անաչառ կարծիքը։

Բայց մօտենանք գիւղի իրականութեանը մի փոքր անալիզի ենթարկենք նրա տնտեսական արդի պայմանները և տեսնենք, թէ ճիշդ է արդեօք յօդուածագրի կարծիքը։

III

Այն բնագաւառը, ուր գտնվում է այդ հարուստ և երջանիկ գիւղը, Երևանի լայնատարած նահանգի այն անբաղդ շրջաններից է, որոնք չը նայած իրանց աշխարհագրական հրաշալի, բանաստեղծական դիրքի, առողջարար օդ ու ջրի, հարուստ, բազմազան ֆաունայի և ֆլօրայի՝ շատ վաղուց ընդմիշտ հրաժարվել են իրանց հարազատ բազմաթիւ զաւակներին կաթնատու սնուցանող մայր լինելուց։

Շրջանիս վարելահողերը, ոչ միայն փորձված գիւղացիների, այլ և հեղինակաւոր մասնագէտների կարծիքով, շնորհիւ իրանց չափազանց աղքատ քիմիական բաղադրութեան, ջրերի անաջող դասաւորութեան և կլիմայական մի շարք պարբերական, անխուսափելի վնասակար պատահարների, օրինակ՝ երկարատև տօթերի, ամեն ինչ չորացնող, մեռցնող խորշակների, հացաբոյսերի մշակման համար միանգամայն անպէտք են։

Ամենաբարեբաջող տարին, մի դեսեատին լաւ մշակած, պարարտացրած և ամեն կերպ խնամած արտը հազիւ տալիս է 30—40 պուդ վատ տեսակի հացահատիկ։

Հին անցեալում, երբ Ղարաքիլիսայի գիւղական համայնքը շատ փոքր էր, իսկ դրան հակառակ ունէր վարելահողերի ընդարձակ, անմշակ ու ազատ տարածութիւն, երբ հողաբաժանութեան մէջ գործադրվում էր «համփա-չարեքա» աւանդական անհագին մասշտաբը, գիւղացիութիւնը բնաւ չէր զգում հացի սուր պակասութիւն, չէր սարսափում սովի ուրուականից։ Վարելահողերը տուած նոյնիսկ չնչին արդիւնքը ապահովում էր բազմանդամ նահապետական ընտանիքների մի քանի տարվայ ամբողջ ապրուստը։

Անցան, անհետ կորան այդ «երանելի» ժամանակները. աճեց ու խտացաւ շրջանիս ազգաբնակութիւնը, շատացան նրա առօրեայ կենսական պահանջները, իսկ հողը դարձաւ մի թզաչափ, այն էլ անչափ յոգնած, ուժասպառ, մշակութեան նախնական անարդիւնաւէտ եղանակներով ու անպէտք ձևերով. միայն այդ ժամանակ գիւղացիութիւնը ծանօթացաւ սովի, քաղցի հետ և տարաւ նրա սոսկալի դառնութիւնները։

Շինականը հակառակ իր դարաւոր անխախտ պահված սովորութեան, անտեսութեան սրբագործված ձևերին, խզեց իր կապը մայր հողի հետ, թողեց նրան անմշակ, անտէր և գնաց դէպի օտարութիւն՝ սոված ընտանիքը կշտացնելու և ընկած տնտեսութիւնը բարձրացնելու նպատակով։

Գիւղը դատարկվեց աշխատաւոր ձեռքերից, երկրագործութիւնը՝ գիւղատնտեսական այդ խոշոր ճիւղը՝ կատարելապէս սնանկացաւ և գիւղի փոքրամասնութեան զբաղմունքը դարձաւ։

Հողից կտրված գիւղական մասսան օտարութեան մէջ կարողացաւ ստեղծել իր համար բարեկեցիկ, հանգիստ կեանք և բարձրացաւ գիւղի քայքայված, կորած տնտեսութիւնը. այդ կը տեսնենք հետևեալ անգամ։

Մ. Ղազարեան

Մեծ-Ղարաքիլիսա

ԲԵՐՈՒԹՕՎ-ԹԱՂԻԵՎԻ ԳՈՐԾԸ *)

Նիստը բացվում է 8 ժ. 25 ր. երեկոյեան։ Հարցաքննվում են վկաները և ի միջի այլոց «Русск. Сл.» թերթի մէջ լոյս տեսած տեղեկութիւնը Բերութովի չարչարանքների մասին։

Պէտք ասած, որ Թաղիևվի և Բերութովի գործի առիթով առաջին լուրը մամուլի մէջ հրապարակ եկաւ «Русск. Сл.»-ում, որի տեղական աշխատակից Գլախենգաուզը նոյնպէս հրաւիրվեց որպէս վկայ։

Բերութովի պաշտպան Ջելենկովիչի այն հարցին, թէ «ո՞վ էք «Русск. Сл.»-ում տպագրել Թաղիևվի տանը տեղի ունեցած ջարդի մասին», աշխատակիցը կտրուկ կերպով ասաց.

— Այդ հարցին չեմ ուզում պատասխանել։

Այնուհետև սկսում են հարցուփորձի ենթարկել Թաղիևվի դռնապան (швейцаръ) Եյնուլ Իսմայիլ-օղլիին, որի սկզբնական և այժմեան ցուցմունքները հակասում են իրար։ Դատախազի նկատողութեանը պատասխանելով՝ դռնապանը արդարացնում է իրան նրանով, որ ինքը ռուսերէն լաւ չը գիտէ...

Հարցաքննում են վրասենեակի ծառաներին, խոհարարին և ադախնին։ Դրանք բոլորն էլ պատասխանում են՝ «ոչինչ չը գիտենք, չենք լսել. ուրիշները կարծեօք, «Бакинецъ» լրագիրն էին կարդում և մեզանից մանրամասնութիւն հարցնում, սակայն մենք Մեարդաքան ենք եղել» (Մեարդաքանը Բագուին մօտիկ մի գիւղ է, ուր Թաղիևվը շքեղ այգի ունի և ուր ապրում են ամառվայ ամիսները)։ Սակայն այդ դասի վկաներից մէկը, մի ռուս աղախին, որ այժմ ծառայում է Թաղիևվի տանը, փոքր ի շատէ հետաքրքրական տեղեկութիւն տուեց՝ ասելով. «Դէպքից մի տարի առաջ ես աշխատում էի Բերութովի տանը, ուր տիրում էր ընտանեկան երկպառակութիւն։ Այդ երկպառակութեան պատճառը, ինչպէս երևում էր նրանց խօսքերից, այն էր, որ Բերութովը սիրում և հետևում էր բարինեային (տիկ. Թաղիևա)։ Այնուհետև ես այդ պատմեցի բարինեային, բայց վերջինս չը հաւատաց. սակայն երբ դէպքը տեղի ունեցաւ, բարինեաս բոլորի առաջ ինձ ասաց, որ իմ յայտնածներս իրան՝ բոլորը ուղիղ են եղել...»։

Հարցաքննութիւնը կանգ առեց փոխ-գնդապետ Մամէդբէկովի շուրջը, որը նոյնպէս մասնակից և ներկայ է եղել ծեծին ու չարչարանքին։ Մամէդբէկովը, պատկանելով զինուորական շարքերին, սկզբներում, երբ դեռ նոր էր հասարակութեան խօսակցութեան նիւթ դառել Բերութովի ջարդը, ահագին աղմուկ առաջ բերեց զինուորականների շրջանում, որոնք և զինուորական քննիչ յանձնախումբ ընտրեցին՝ պարզելու գնդապետի բռնած դիրքը չարչարելու ժամանակ։ Հրաւիրված վկայ՝ 29-դ սահմանագծային գնդի պետ բարոն Օստեն-Սակէն յայտնում է, որ զինուորական դատարանը շտաբս-րոտմիստր Մամէդբէկովի վերաբերմամբ այն եզրակացութեան է հասել, որ նա ծեծին չէ մասնակցել. սակայն,—շարունակում է գնդապետ Օստեն-Սակէն,—զինուորականի համար անպատուութիւն է, երբ եօթը հոգի յարձակվեն մի անզէն մարդու վրա, ծեծեն, չարչարեն նրան, և ներկայ գտնվող զինուորականը չը պաշտպանի։

Դատախազ.—Բայց նա փաստը չէ ուրանում։

Գնդապետ.—Ոչ. բայց յայտնում է, որ ինքը անմիջական կապ ու մասնակցութիւն չէ ունեցել, և այդ ապացուցվում է արքայազն Մանսուրի տուած գրաւոր յայտարարութեամբ, որը թէև տարբերվում են իրարուց։

Այնուհետև պատմում է գնդապետ վկան, որ ինքը շրջանային հրամանատարից առաջարկութիւն է ստացել հրամայել Մամէդբէկովին եօթը օրվայ ընթացքում հրաժարական ներկայացնել, սակայն վերջինս այդ չէ արել, «որից յետոյ, երբ 7 օրը լրացաւ, մենք, զինուորական շրջանս հրաժարված համարեցինք և ճանաչեցինք Մամէդբէկովին»։

Պաշտ. Ջամբուլովսկի.—Ի՞նչ հիմունքների վրա վարվեց զինուորական ընկեր. դատարանը Մամէդբէկովի հետ այդպէս։

Գնդապետ.—Արքայազն Մանսուրի և Մամեդբէկովի իրանց տուած իրարու հակառակ ցուցմունքի վրա, նոյնպէս և Բերութովի նամակի, որը իբրև յայտարարութիւն ուղղել էր մեզ։

Վերջացնելով գնդապետ Օստեն-Սակէնն իր խօսքերը՝ յայտնում է յունվարի 20-ից պաշտօնապէս, որ բարձրագոյն կարգադրութեամբ Մամէդբէկովը հեռացված է ծառայութիւնից և իրաւունք չունի հագնելու մունդիր։ «Սակայն այստեղ նա ներկայացել է մեր մունդիրով. խնդրում եմ,—աւելացնում է գնդապետը,—իմ այդ յայտարարութիւնը կցել գործին և մտցնել արձանագրութեան մէջ»։

Նախագահը դիմելով Մամէդբէկովին հարցնում է, թէ «դուք ինչ հագուստի մէջ էք գտնվում»։ Մամէդբէկովը գունատված, տատանվելով յայտնեց, որ ինքը ոչ թէ 29-դ գնդի հագուստի մէջն է, այլ ընդհանրապէս սահմանային զինւ. հագուստի։

Դատարանին յանձնված գործերի մէջ գտնվում էին մի քանի փաստաթղթեր առանձին ծրարների մէջ, փաստաթղթերից մի քանիսը զինուորական 29-րդ գնդի զինուորական պատիւների արժանիքների արձանագրութիւններից էր, և այլ փաստաթղթեր Բերութովից ներկայացված։ Դատախազը, նախագահը և պաշտպան Ջամբուլովսկին կարճ հակաճառութիւնից յետոյ որոշեցին ծրարները բացել ու քննել դռնփակ ի նկատի առնելով զինուորական գաղտնիքները և նրանց պատիւը։

Դա արդէն դատավարութեան երրորդ օրն է, ամսիս 8 ըն։ Առաջին անգամ հրաւիրում են վկայ Մահմէդ-Բաղըր Թաղիեվին՝ Թաղիեվի ազգականը։ Նա յայտնեց, որ իրան կանչեցին Թաղիեվի տնից. «Երբ գնացի այնտեղ,—ասում է նա,—հաջին մի ճառով դիմեց ինձ և յայտնեց, որ Բերութովը վիրաւորել է իր ընտանեկան պատիւը. հրաւիրեցին և Բերութովին, սակայն վերջինս պատասխանեց, որ ճիշդ չէ. ապա կանչեց Թաղիեվը իր կնոջը և Բերութովի կնոջը։ Իրար դիմաց կանգնեցին։ Թաղիեվը Բերութովին միայն ասաց՝ „вонъ, мерзавецъ“, իսկ երբ Բերութովը դուրս եկաւ գնալու, սանդուղքների վրա վիճեցին եղբօրս հետ, որը Բերութովին ապտակ տուեց. ապտակեցի նաև ես»։

Հրաւիրվում է հայ վկայ Ղազեանցը, որը Թաղիևվի մօտ է ծառայում։ Նա յայտնում է, որ այդ օրը Թաղիևվի տանը մարդ չէ եղել, ինքը տանից դուրս գալիս պատահել է Բերութովին, բայց ծեծի հետք կամ արիւն երեսին չէ նկատել։ Այդ սպիտակ վկայի ցուցմունքը ծիծաղ շարժեց ներկայ եղողների մէջ. մինչդեռ սանդուխքների վրայի ծեծը ծեծողները իրանք են խոստովանում։

Ծեծի երրորդ օրը տեխնիկական-ինժեներական ժողով է նշանակված լինում ծովագնացների մօտ. ժողովը մայիսի 18-ին է լինում նշանակված. երբ 17-ին, ծեծի հետևեալ օրը, Բերութովին ևս հրաւիրում են, պատասխան է ստացվում, որ նա հիւանդ է, իսկ 18-ին Բերութովը ժողովի է գնում։ Ժողովականներից մի քանիսը, հարցաքննվելով դատաւորներից, յայտնեցին, որ այդ օրը, ծեծի երրորդ օրը, Բերութովին ժողովում տեսել են։ «Սակայն նա մութ անկիւն էր ընտրել իր համար, չը գիտենք ինչու, և երեսին ծեծի հետքեր չը նկատեցինք, մանաւանդ որ ուշադրութեամբ չը նայեցինք տեղը մութ լինելու պատճառով»։

Պաշտպանների համար պարզ չէ, թէ արդեօք սանդուղքների վրա կա՞յ այնպիսի տեղ, որ Բերութովին սանդուղքների վրա ապտակելիս նա վայր ընկնի և ծնօտի տակը պատռվի. ուստի առաջարկում են նախագահին էքսպերտների հետ անձամբ դիտել Թաղիեվի բնակարանը, ննջարանը, սանդուղքներն և այլն։ Մանաւանդ որ քննիչը ժամանակին յատակի վրա թափված արեան վրա ուշադրութիւն չէ դարձրել ու արձանագրութեան մէջ մտցրել։

Դատարանը սկզբից դէմ է լինում պաշտպանների պահանջին՝ դիտելու բնակարանը, սակայն Մակլակովը պնդելով մատնանշում է 630-րդ յօդուածը, որից յետոյ նախագահը և անդամները խորհրդակցելով յայտնում են, որ Թաղիեվի բնակարանը դիտելու հարցը սկզբունքով որոշված է։

Ուշ լինելու պատճառով՝ սենեակների դիտելը մնում է հետևեալ օրվան։

Երեկոյեան ժամը 5-ին նիստը փակվում է։ Միւսը՝ վաղը առաւօտեան ժամը 10-ին։

Ս. Գարագաշ

(Վերջը միւս անգամ)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ *)

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 13 մարտի

Քննվում է դատական բարենորոգումների մասնաժողովի զեկուցագիրը այն հարցի մասին՝ թէ որքան ցանկալի է կանանց ևս իրաւունք տալ լինելու երդուեալ հաւատարմատարներ։

Զեկուցանող Չէրնօսվիտօվը յայտնում է, թէ դատական մասնաժողովը, քննելով Դումայի 100 անդամի օրէնսդրական առաջարկութիւնը, ընդունեց այն ցանկալի պայմանով միայն, որ երդուեալ ու մասնաւոր հաւատարմատարների թւում կարելի է ընդունել միայն բարձր իրաւաբանական կրթութիւն ստացող կանանց։ Յիշեցնելով, որ ներկայումս գործող ռուսական օրէնքների մէջ արգելք չը կայ կանանց փաստաբանութեամբ զբաղվելու դէմ, զեկուցանողը հրաւիրում է Դումային ընդունել դատական մասնաժողովի եզրակացութիւնը։

Արդարադատութեան մինիստրի օգնական Վերեվկինը, ընդունելով որ դատական ներկայացուցչութեան ինստիտուտի արդի կանոնագրութիւնը ոչ լիովին բաւարարեցնում է և պահանջում է ձեռք առնել տարբեր միջոցներ՝ դատարանի առաջ ազգա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈԲԵԼԵԱՆԻ ՏՕՆԻ ՕՐԸ

Հայերէն առաջին տպագրութեան տարին, որից կախումն ունի և տօնվելիք յոբելեանի ժամանակը, մինչև այժմ դեռ ճշդիվ որոշված չէ։ Հ. Ակինեանը իր յօդվածում, որ տպվեց «Մշակի» № 34 ում, հաղորդեց մի քանի նոր տեղեկութիւններ, որոնցով հաստատվում էր, թէ Պարզատումարը և ընկեր գրքերը տպագրութիւն են և ոչ թէ փորագրութիւն, բայց ոչ մի նորութիւն չը հաղորդեց Պարզատումարի տպվելու ժամանակի մասին։

«Մշակի» խմբագրութիւնը դիմել էր Վիեննայի Մխիթարեանների ընդհանրական աբբայ հ. Գովրիկեանին, խնդրելով մի քանի օրով ուղարկել Պարզատումարից մի օրինակ Թիֆլիս, քննութեան համար։ Յոյս կար, որ գիրքն այստեղ ստացվելիս՝ գործին տեղեակ մարդիկ նրան մանրամասն ուսումնասիրելով գուցէ կարողանան նաև մի լոյս սփռել գրքի տպագրութեան ժամանակի վրա։ Բայց հ. Գովրիկեանի նամակից, որ տպվեց «Մշակի» № 49-ում, երևաց, որ միաբանութեան մէջ սահմանված անփոփոխելի կանոնով՝ մատենադարանից գիրք դուրս չէ տրվում *)։ Չունենալով յոյս, որ Թիֆլիսից մարդիկ ուղարկվեն Վիեննա, տեղումը քննելու Պարզատումարը, մենք ստիպված ենք մեր դատողութիւնների և կարծիքների համար հիմք ընդունել, ինչպէս և երկու տասնեակ տարի առաջ, միմիայն հ. Գովրիկեանի յօդվածը «Հանդէս Ամսօրեայում» (1889, հոկտեմբեր) որտեղ բանասէր հեղինակը փորձել է որոշել Պարզատումարի տպագրութեան ժամանակը։

Ինչպէս ուրիշ անգամ էլ գրել եմ, հ. Գովրիկեանը, նկատելով որ այդ գիրքը Պարզատումար է հայոց 961 (=Քր. 1512) թվականին՝ հավանական դատողութիւն է անում, թէ նա ուրեմն տպված պէտք է լինի կամ այդ թվականի մէջ, կամ այդ թվականի համար, կամ ուրիշ խօսքով՝ կամ տպված է 1512-ին, կամ մի քանի ամիս, նոյն իսկ մի տարի առաջ սկսված է, որպէսզի 1512-ի համար պատրաստ գործածական լինի։ Սակայն հ. Գովրիկեանի իր այս հավանական դատողութիւնից հանած եզրակացութիւնը ամբողջական չէ. նա առանց որևէ նոր դատողութիւն կամ փաստ մէջ բերելու՝ կանգ է առնում միայն 1512 թվի վրա, և այս տարին յայտարարում է իբրև Պարզատումարի տպագրութեան տարի։ Մինչդեռ բանասէր հօր դատողութիւնից անհրաժեշտօրէն բղխում է, որ Պարզատումարը կարող էր տպված լինել և 1511-ին, որ և աւելի հավանական կը լինէր։

Պարզատումարի տպագրութեան ժամանակի այս միակ աղբիւրը քննելով՝ ես կարծիք էի յայտնել, որ այդ ժամանակն անորոշ է և անստոյգ և տատանվում է 1511—3 թվականների մէջ։ Եվ քանի որ 1513-ին անկասկածելի կերպով տպագրված են ուրիշ չորս գիրք՝ աւելի բնական է մեր տպագրութեան առաջին շրջանի սկսել և յոբելեանը տօնել 1513-ին։ Ցոյց էր տվել նաև, որ Պարզատումարի ժամանակի այս անստուգութիւնը առիթ է տվել երկու հեղինակի՝ հակասութեան մէջ ընկնելու։ Այս հեղինակները, հ. Զարբհանալեան և Լէօ, իրանց տպագրութեան Պատմութիւնների մէջ, ընդունելով հանդերձ որ Պարզատումարը տպված է 1512-ին, տպագրութեան առաջին շրջանը սկսում են 1513-ից, և պ. Լէօն այս տարին համարում է յոբելեանական տարի։ Եվ ես գտնում էի, որ այս հեղինակները իրավացի են վարվել՝ նախապատվութիւն տալով 1513 թվականին, երբ անկասկածելի կերպով չորս գիրք է տպագրվել, քան 1512-ին, որ կասկածելի և անստոյգ է, քանի որ Պարզատումարը կարող էր տպված լինել և՛ 1511-ին և 1513-ին *)։

Քանի որ այս անորոշ դրութեան մէջ է խնդիրը և չը կան նորագոյն տվեալներ մեր առաջին տպագրութեան ժամանակը աւելի ճիշդ որոշելու համար՝ մնում է 1511—1513 թվականների մէջ փնտռել մի այնպիսի օր, որ կրէր հավանականութիւն՝ իրականութեան ամենից մօտ լինելու։ Այդ օրը, իմ կարծիքով, պէտք է համարվի հայոց 961 թվականի առաջին ամսի այսինքն Նավասարդի 1-ը։ Սա այն յարմարութիւնն ունի, որ սահմանագլուխ է կազմում հայոց 960 և 961 թվականների մէջ (=Քրիստ. 1511 և 1512) և միւս կողմից շատ մօտենում է Քրիստ. 1513 թվականին, որ ամենայն իրավամբ ճշմարիտ յոբելեանական տարին է մեր տպագրութեան։

Արդ՝ հայոց 961 թվականի Նավասարդի 1-ը Քրիստ. 1512 թվականի ո՞ր օրվան է հանդիպում։

Այս հարցին պատասխանելուց առաջ պէտք է մի քանի խօսքով բացատրել մեր հին տոմարների էական յատկութիւնները։

Հայոց հին տոմարի առաջին տարին սկսվում է Քրիստ. 552 թվականին, ուստի ներկայ 1912-ին հայոց թվականի 1361-րդ տարին է (և 1362-րդի սկիզբը)։ Այս տոմարով՝ տարին, եգիպտական տարու նման, բաղկանում էր 365 օրից, որ բաժանվում էր 12 ամիսների, իւրաքանչիւրը 30 օր տևողութեամբ, իսկ մնացած 5 օրը կոչվում էին «Աւելեաց»։ Բայց յայտնի է, որ տարին իրօք աւելի երկար է և ունի 365 օր և մօտ 6 ժամ տևողութիւն։ Տարեկան այս մօտ 6-ական ժամերը գումարվելով՝ չորս տարվայ ընթացքում կազմում են գրեթէ մի օր։

Այս պատճառով Հռոմում դեռ Յուլիոս Կեսարի ժամանակ, նախկին խառնաշփոթ տոմարը կարգի բերելով՝ սահմանվեց երեք տարի իրար վրա հաշվել 365 օր, իսկ ամեն մի չորրորդ տարին 366 օր (նահանջ տարի, ինչպէս է ներկայ 1912 թվականը)։ Այս հռոմէական տոմարը, որ կոչվեց Յուլեան տոմար և գործածութեան մէջ մտաւ 45 թվ. Քր. առաջ, Եվրոպայում գործածական էր մինչև 16-րդ դարի վերջերը, իսկ մեր մօտ շարունակում է գործածվել մինչև այսօր։

Բայց Յուլեան տոմարն էլ ճիշդ չէ, որովհետև տարվայ իսկական տևողութիւնը ոչ թէ 365 օր և 6 ժամ է, այլ 365 օր, 5 ժամ, 48 րոպէ և 47,51 վայրկեան։ Մօտ 11 րոպէ տարեկան տարբերութիւնը, որ կայ Յուլեան տոմարի և իսկական արեգակնային տարու տևողութեան մէջ, դարերի ընթացքում գումարվելով՝ առաջ էին բերում գարնան գիշերահավասարի (մարտի 21-ի) տեղափոխութիւն, և սրա հետ կապված զատկական տօնի սխալ։ Տասնվեցերորդ դարի վերջերին Գրիգորիոս ԺԳ. պապը ուղղել տվեց տոմարը աւելի ճիշդ հաշիվներով։ Նոր տոմարը, որ կոչվեց Գրիգո-

---

*) Տես «Մշակ» № 54.

*) Տես «Մշակ» № 56.

*) Այս դէպքում, Վիեննայի միաբանութեան վրա արդէն բարոյական պարտավորութիւն է ընկնում՝ օր առաջ լոյս ընծայել նմանահանութեամբ ամբողջ Պարզատումարը, ինչպէս առաջարկել էի նախորդ յօդվածումս („Մշակ“ № 38), իբրև յոբելեանական ընծայ միաբանութեան կողմից։

*) Յայտնի է, որ պ. Լէօն կտրականապէս մերժում էր, որ ինքը իր տպագրութեան Պատմութեան մէջ գրած լինի 1513 թվականը՝ իբրև տպագրութեան առաջին տարի և 1913-ը՝ իբրև յոբելեանական տարի։ Յունվարի 28-ի ժողովում նա մի քանի անգամ բացարձակապէս կրկնեց, թէ ինքը 1512 թվականն է գրել, 1513 չէ գրել։ Սակայն երբ ես „Մշակում“ չակերտներով, երեսները ցոյց տալով, մէջ բերի չորս հատված նրա գրքից, որտեղ յոբելեանական տարի համարված է 1913-ը, իսկ տպագրութեան առաջին տարի 1513-ը և հրապարակով բացատրութիւն պահանջեցի՝ նա վերջապէս տվեց բացատրութիւն, հետևեալ խօսքերով. „Քաջ ըմբռնելի ուսումնասէրները կարդալով իմ այն խօսքերը, թէ նորագոյն ճիշդ հետազօտութիւնները ապացուցել են, որ առաջին տպագրութիւնն եղել է 1512 թվականին՝ մատների վրա կը համարէր, թէ երբ է ուրեմն լրանում այդ դէպքի 400-ամեակը, և մատներով հաշվելուց յետոյ կասէր թէ ամեն մի ուրիշ հաշիվ սխալ է“ („Հօրիզոն“ № 33)։ Հետաքրքրական է, ինչպէս պ. Լէօն՝ „մի ուրիշ հաշիվ“ անորոշ խօսքերով՝ վարագուրում է մերկ իրողութիւնը և դարձեալ խուսափում է խոստովանելուց, որ 1513 թվականը իր գրքում յիշել է ինքը չորս անգամ՝ իբրև հայերէն տպագրութեան առաջին տարի։ Բայց հարցը այդ չէ։ Ի՞նչպէս է առաջ եկել այդ „սխալը“, որ պ. Լէօն յանձն է առնում։ Երբ նա առաջաբանում գրում էր 1900 թվի յունիսին, թէ «13 տարուց յետոյ 400 տարի կանցնէ այն օրից, երբ լոյս տեսաւ հայերէն առաջին տպագրված գիրքը», արդեօք ինքը չէ կարողացա՞վ „մատների վրա համարել“ և իմանալ, որ 1900+13 անում է 1913, և ոչ թէ 1912։ Կամ այս առաջաբանը գրելիս և գրքի մէջ երեք անգամ 1513 թվականը իբրև առաջին տարի յիշելիս, արդեօք նա մոռացե՞լ էր իր իսկ գրածը, թէ «ճիշդ հետազօտութիւնները ապացուցել են... 1512 թվականը»։ Տպագրութեան պատմութիւնը գրող հեղինակից կարելի՞ է սպասել այսպիսի մոռացկոտութիւն՝ տպագրութեան սկզբնավորութեան ճիշդ թվականի նկատմամբ։ Բայց մեր տարակուսանքն աւելանում է նրանով, որ հ. Զարբհանալեանը, պ. Լէօից հինգ տարի առաջ, միևնոյն հակասութեան մէջ է ընկնում։ Պարզատումարի տպագրութեան տարին նա 2 անգամ նշանակում է 1512, մի անգամ՝ 1512—13, իսկ տպագրութեան սկզբնավորութեան տարի դնում է 4 անգամ 1513 թվականը։ Պ. Լէօն այս էլ բացատրում է ասելով, որ դա «ուղղակի գրչի սխալ է»։ Ի՞նչպիսի տրտաշարժ զուգադիպութիւն սխալների, և բոլորը այդ մի տարեթվի, 1513-ի, շուրջը։ Սակայն կարծում եմ, որ պ. Լէօն իրան չը պէտք է թոյլ տար՝ մեռած հեղինակի փաստաբանը հանդիսանալ և այդպիսի անպատվաբեր միջոցով նրան արդարացնել (?)։ Հ. Զարբհանալեանը գրչի սխալ չէ արել, 1513-ը անուշադրութեան հետևանք չէ, այլ կատարեալ գիտակցական վերաբերմունքի։ Հեղինակը իր գրքի 14 երեսում ասում է. «1512—13-ին հրատարակված նշանակեցինք՝ մեզի հասած հայկական տպագրութեանց հնագոյնը, որ... է Պարզատումար»։ Սրանից երևում է, որ հանգուցեալ հեղինակը Պարզատումարի նկատմամբ տատանվում է 1512-ի և 1513-ի մէջ (որ շատ բնական է՝ երբ ի նկատ առնենք մեր խորհրդածութիւնները այդ գրքի տպվելու ժամանակի անորոշութեան մասին), այլ հաստատ տպագրութեան սկզբնավորութեան տարի համարել է անկասկածելի 1513 թվականը։ Զուր է պ. Լէօն վարկաբեկում մեռած հեղինակին, առանց դրան էլ իր «սխալը» կատարելապէս գնահատում ենք։

բնակութեան շահերը պաշտպանելու գործի աւելի կանոնաւորութեան համար, կարծում է միևնոյն ժամանակ, որ պրակտիկան չէ մատնանշում դատական ներկայացուցչութեան առանձին պակասաւորութեան վրա. երդուեալ-հաւատարմատարների թիւը անց է ազգաբնակութեան համար պահանջելի չափից. այդ պատճառով հազիւ թէ անյետաձգելի հարկաւորութիւն է ներկայանում լրացնել փաստաբանների կազմը կանանցով, և ասել, որ կանանց ներկայ պայմաններում կրթութիւն ստանալու իրողութիւնը նման չէ տղամարդու ստացածին. կանանց միջնակարգ կրթութիւնը պակաս է տղամարդկանց կրթութիւնից, իսկ կանանց բարձրագոյն կրթական հաստատութիւններում իրաւաբանական գիտութիւնը բնաւ հետամուտ չէ պատրաստել կանանց դատական ակտիվ գործունէութեան։ Յետոյ չը պէտք է մոռանալ, որ փաստաբանի գործունէութիւնը, որ ունի հասարակութեանը ծառայելու բնաւորութիւն, ընդ սմին հանդիսանում է որոշ չափով արդարադատութեան գործի պետական ծառայութիւն։ Այդ օրինակ հանգամանքներում կանանց ևս փաստաբաններ դարձնելու հարցի օրէնսդրական լուծումը կը նախորոշէ կանանց պետական ու հասարակական գործունէութեանը մասնակից անել տալու ընդհանուր խնդիրը։ Բացի դրանից, շատ յաճախ քննութեան առաջարկվող գործերը բանում են մարդկային կեանքի, ապականված բարքերի աբաների այնպիսի սարսափելի պալարոտ ու կեղտոտ պատկերներ, որ ոչ մի կին, եթէ նա չէ կորցրել վերջնականապէս կանացիութիւնը և ամօթի զգացմունքը, չէ կարող և չը պէտք է վարէ այդ տեսակ գործեր (աղմուկ ձախից, բողոքներ)։ Միևնոյն դիտումներով կին-փաստաբանները դժուարութեամբ կայցելեն բանտերը։ Այդպիսով փաստաբանի պարտականութիւնը հազիւ թէ կանայք կատարեն նրանց յատուկ կանացի ամօթխածութեան ու կանացիութեան այլ առանձնայատկութիւնների զգացմունքներից զրկված։ Այդ ամենի հիման վրա կառավարութիւնը հարցի քննութիւնը գտնում է յամենայն դէպս վաղաժամ և հրաժարվում է յանձն առնել մշակելու համապատասխան օրինագիծ։

Անդրոնովը ներկայ հարցում հակակարծիք լինելով հոկտեմբերեանների իր ֆրակցիայի հետ, իրան հակառակորդ է յայտարարում կանանց փաստաբանութեան հարցում, որովհետև կնոջ անմիջական կոչումն է զաւակ ծնել և զաւակներ կրթել։ Միւս կողմից՝ փաստաբանութեան մէջ պակասութիւն չը կայ։

Զեկուցանող Չերնովիտովը, առարկելով մինիստրի օգնականին, նրա արգումենտացիան գտնում է չափազանց թոյլ։ Մտածող կինը գիտէ դատարանի առաջից անցնող ապականութեան պատկերները։ Նա դէմ է շպրտում նրանց միևնոյն արհամարհանքով, ինչպէս ամեն մի ազնիւ ու շիտակ տղամարդ։

Տիմօշկինը կին-բժշկին տալիս է հասարակական, նոյնիսկ պետական մեծ նշանակութիւն. իսկ ինչ վերաբերում է կին-փաստաբանին, կինը կարող է իր ազդեցութեամբ ներգործել դատավարութեան ելքի վրա, երդուեալ-ատենակալների վճռի վրա։

Շուբինսկին կարծիքով հարցին պէտք է նայել հասարակական տեսակէտից։ Թող ինքը հասարակութիւնը օգտվէ կամ չօգտվէ կին-փաստաբաններից։ Միայն կեղտոտ մտքերը ու կեղտոտ շուրթերը կարող են ենթադրել, թէ կնոջ ներկայութիւնը որևէ հրապուրանք կը մտցնէ կամ որևէ կեղտոտ բան այն մթնոլորտում, ուր նա աշխատելու է, ծառայելով ճշմարտութեան ու մարդկային արժանապատուութեան (ծափահարութիւն ձախից և կենտրոնում)։

Ռովարովը առաջադիմականների անունից յայտնում է, որ ժամանակն է կնոջը ևս տղամարդուն համահաւասար իրաւունքներ տալ։ Վաղուց է ռուս կինը հասունացել։

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Չորեքշաբթի, մարտի 14-ին, երեկոյեան ժամը 8-ին, Փոխարքայի խորհրդի դահլիճում, սենատոր Վասացիի նախագահութեամբ տեղի ունեցաւ Ռուսաց Աշխարհագրական Ընկերութեան կովկասեան ճիւղի նիստը, ուր Ընկերութեան անդամ Ա. Շելկովնիկով մի զեկուցումն կարդաց Սվանեթիայում և Մինգրելիայում կատարած իր ճանապարհորդութեան մասին և լուսաբանեց զեկուցումը պատկերներով մոգական լապտերի լոյսով։ Զեկուցումը բաւական հետաքրքրական էր, մանաւանդ երբ զեկուցանողը նկարագրեց և բնորոշեց Սվանեթիան և սվաններին։

◆ Կաթողիկոսական տեղակալ Սուրէնեան արքեպիսկոպոսի կարգադրութեամբ, այս կիրակի, մարտի 18-ին, Թիֆլիսի բոլոր հայ եկեղեցիներում պէտք է գանձանակ պտտեցվի յօգուտ կոյր-համրների ընկերութեան։

◆ Յովնանեան-Մարիամեան օրիորդական դպրոցի հոգաբարձութիւնը իր վերջին նիստում քննել է դպրոցի թոշակարկղի կանոնադրութեան ծրագիրը։ Դպրոցը իր կողմից ամեն տարի տալու է 1,200 րուբլի։ Թոշակարկղի նպատակն է ապահովել դպրոցում բոլոր պաշտօնավարող անձանց ապագան, տալով նրանց կենսաթոշակ։

◆ Երէկ Ա. Քալանթար ճանապարհ ընկաւ դէպի Մոսկվա՝ խորհրդակցելու Ժամհարեան դպրոցին վերաբերեալ գործերի մասին։ Օգտվելով դէպքից Ա. Քալանթար կը ժողովի տեղեկութիւն այն ցուցահանդէսի մասին, որ պէտք է այս տարի սեպտեմբերին բացվի Մոսկվայում ոչխարաբուծութեան վերաբերեալ։ Այդ ցուցահանդէսին պէտք է մասնակցի և Անդրկովկասը։

◆ Թաւրիզում սկսել է հրատարակվել մի նոր հայ շաբաթաթերթ «Միտք» անունով, որի խմբագիր-հրատարակիչն է Ալ. Տէր-Վարդանեանց։ Այժմ դա միակ հայերէն թերթն է, որովհետև նախկին «Առաւօտ» և «Զանգ» թերթերը դադարել են։ Ցանկալի էր, որ գոնէ այս թերթը կարողանար յարատևել, որովհետև Թաւրիզում անհրաժեշտ է ունենալ մի լուրջ օրգան, նուիրված ժողովրդական և հասարակական շահերին, տարածող առաջադիմական և լուսաւոր գաղափարներ։ Առ այժմ դժուար է ասել, թէ նոր թերթը որքան կը համապատասխանէ այդ պահանջին, քանի որ մեր ձեռքը հասել է միայն 2—3 համար. բայց մի քանի յօդուածներից դատելով՝ յոյս կայ, որ թերթը կանգ կառնի այդ շաւղի վրա։

◆ «Մշակի» երէկվայ համարում հաղորդված լուրը յօգուտ Թիֆլիսի առևտրական և Մանթաշեան վաճառականական դպրոցների վերցնվելի 50-ական ր. տուրքի մասին՝ սխալ է։ Այդպիսի թոյլատուութիւն ֆինանսների մինիստրի կողմից դեռ չէ եղել, այլ միայն Կովկասի Փոխարքան ներկայացրել է մինիստրին քաղաքային Դումայի և առևտրականների միջնորդութիւնը՝ այդպիսի տուրք սահմանելու համար։

◆ Մեզ խնդրում են տպագրել, որ Հաւլաբարի ս. Կարապետի եկ.-ծխ. դպրոցի հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ ստացաւ հանգուցեալ Ալ. Մանթաշեանի ժառանգներից 1,000 ր. նուէր իր խնամքին յանձնված դպրոցին։

◆ Երէկ մենք հաղորդել էինք, որ Կովկասի Փոխարքան արգելեց զինուորականներին և քաղաքացիական պաշտօնեաներին յաճախել Գորգիջանովի, «Ապօլլօ» և «Պարադիզ» այգիները. սակայն քաղաքացիական աստիճանաւորներին խօսքերի իմաստի տակ պէտք է հասկանալ նրանց, որոնք համարվում են զինուորական աստիճանաւորներ։

◆ Կովկասի Փոխարքան թոյլատրեց Թոքախտի դէմ Մաքառող Ընկերութեանը ապրիլի 20-ին կազմակերպել «Սպիտակ ծաղիկի» վաճառումն յիշեալ Ընկերութեան օգտին։

◆ Պետերբուրգից ամսիս 8-ից գրված մի մասնաւոր նամակից տեղեկանում ենք, որ Դաշնակցութիւն կուսակցութեան գործի առիթով կազմված դատարանի պրոկուրորն սկսել է իր մեղադրական ճառը մարտի 6-ին և հաւանօրէն կը վերջացնէ ամսիս 10-ին։ Մինչև մարտի 8-ը պրոկուրորը հրաժարվել է 45 ամբաստանեալներից 5-ին մեղադրելուց, որոնց թւումն է, բացի Յովհ. Թումանեանից, նաև Ալ. Մելիք-Ազարեանը։

◆ Պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքի կառավարիչ Դ. Բեզօբրազովը վերադարձաւ արտասահմանից և վերստանձնեց իր պաշտօնը։

◆ Քաղաքային վարչութեան անդամի պաշտօնի համար մի խումբ ձայնաւորներ առաջ են մղում Մ. Զաքարի թեկնածութիւնը, իսկ քաղաքային իրաւաբանի պաշտօնի համար առաջարկում են Մ. Աթաբէգեանին։ Տրվում է նաև քաղաքային վարչութեան անդամի պաշտօնի համար բժշկա-սանիտարական տեսուչ բժ. Կ. Ստեփանեանի անունը։

◆ Թիֆլիսում կազմակերպվում է բնութեան սիրողների մի նոր ընկերութիւն, որի կանոնադրութիւնը արդէն մշակվում է։

◆ Թիֆլիսի պօստ-հեռագրային շրջանի գլխաւորին խնդիր են ներկայացրել Սադախլօ կայարանի շուրջը ապրող կալուածատէրերը, որպէսզի յիշեալ կայարանում բացվի պօստային բաժանմունք։

◆ Մարտի 12-ին Թիֆլիսի դատաստանական պալատի սեսսիան Թուխթայիսում պիտի քննէր վրաց յայտնի գրականագէտ Ն. Ժորդանիայի գործը, որը մեղադրվում էր «Անարխիզմ» խորագրով մի գրքոյկ լոյս ընծայելու գործով։ Մեղադրեալի հիւանդութեան պատճառով գործի քննութիւնը յետաձգվեց։ Դատարանը որոշեց բժշկական քննութեան ենթարկել Նոյէ Ժորդանիային, ստուգելու համար նրա հիւանդ լինելու հանգամանքը։

◆ Այսօր, Միքայէլեան արհեստագիտական դպրոցի վերջին դասարանի սաները, թւով 37 մարդ, էքսկուրսիայով գնում են Բագու, ուր կը դիտեն նաւթային հանքերը, շոգենաւերը և այլն։ Նրանք Թիֆլիս կը վերադառնան մարտի 23-ին։

◆ Քաղաքային դումայի կողմից տրամվայի վրա հսկող մասնաժողովը անօնիմ ընկերութեանը տուգանեց 7922 ռուբլով, փետրվարի 21-ից մինչև մարտի 1-ը անհրաժեշտ թւով վագոններ չը բանեցնելու համար։

◆ Թիֆլիսի քաղ. բուժարանի բժիշկ Ա. Մուխարինսկին տարրալուծութեան ենթարկելով քաղաքային ջրմուղի ջուրը, գտաւ նրան բաւարար խմելու համար։

◆ Մարտի 14-ին, Թիֆլիսի քաղաքային գանձարկղը միայն ջրի վաճառումից ունեցաւ 7000 ր. մուտք։

◆ Մարտի 21-ին, Թիֆլիսի հասարակական ակումբում (բորսայի դահլիճ) տեղի կունենայ գրականական երեկոյթ Ա. Հերցէնի ծննդեան 100-ամեակի առիթով։

◆ Մարտի 13-ին, Ծավկիսի գիւղի տանուտէրի օգնական Սաքուլ Գիբբիշվիլին յայտնեց, որ նոյն օրը անցնելով Սկինտասխիվի ձորի միջով, նա յիշեալ ձորի մէջ պատահեց մեռնող մի մարդու։ Ոստիկանութիւնը գտաւ նոյն տեղում իրօք մի ուշաթափ մարդ, որը Ռաճայի գաւառի գիւղացի Սվիմօն Տօգօնիձէն էր։

◆ Մարտի 14-ին, Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը իրաւաբանների հետ միասին գնաց քաղ. վարչութեան պաշտօնատեղի շէնքի կողքին գտնվող շինութիւնը, որը պատկանում է վրաց ազնուականութեան։ Շէնքը գնահատվում է 490,000 ռուբլի։

◆ Մարտի 14-ին, Կուկիայի ուղղափառների գերեզմանատանը քացախի թթուտով թունաւորվեց Պրասկովիա Եակօվլեվան՝ 21 տարեկան։ Նրա կեանքը դուրս է վտանգից։

◆ Քաղաքային ծննդաբերական ապաստարանում ծնվել են 139 մանուկներ, որոնցից 5-ը մեռել են։ Ապաստարան դիմող ծննդկանների թիւը հաւասարվում է 151 հոգու փետրվար ամսի ընթացքում։

◆ Ֆրանսիական աւտոմօբիլային անօնիմ ընկերութիւնը այս մայիսի 1-ից բաց է անում ամենօրեայ կանոնաւոր երթեւեկութիւն Աղստաֆայից մինչև Դիլիջան և Մեծ-Ղարաքիլիսա։ Հարկ եղած դէպքում երթեւեկութիւն կը լինի նաև Երևանի ու Դիլիջանի միջև։ Ամառս, ճանապարհորդներին դիւրութիւն տալու համար, նոյն աւտոմօբիլները ամեն օր Դիլիջանից կը տանեն նրանց մինչև Սևանայ լիճը և ետ կը բերեն։ Ճանապարհավարձը ամեն տեղ չափաւոր է նշանակված և աւելի բարձր չէ, քան կառքի վարձը։

◆ Ուղղում.—«Մշակի» երէկվայ համարի (№ 56) մէջ տպված «Մուսաբէկ Մելիք-Ղարագեօզեանի յիշատակին» յօդուածում սպրդել է հետևեալ սխալը. յօդուածի վերևից 10-րդ տողում տպված է «... հոգաբարձու Ներսիսեան Հ. Հ. Դպրոցում», պէտք է կարդալ՝ «... Շուշու Հ. Հ. Դպրոցում»։

ՄԱՄՈՒԼ

Հայկական մամուլի օրգանները հետզհետէ արձագանք են տալիս «Մշակի» 40-ամեայ յօբելեանի հրաւէրին։

Նոր-Նախիջևանի «Լոյս» շաբաթաթերթը իր № 5-ում նուիրել է մի երկար յօդուած «Մշակի» 40-ամեակին։ Առաջ ենք բերում գլխաւոր մասերը։

«Կաթողիկոսական հարցից յետոյ ռուսահայ մամուլի առաջ երկու կարևոր խնդիր է դրված առ այժմ՝ հայկական տպագրութեան 400-ամեակը և «Մշակի» 40-ամեակը. երկուսն էլ յօբելեանական հարցեր, երկուսն էլ կուլտուրական, մտաւոր առաջադիմութեան վերաբերող ուշագրաւ տօնախմբութիւններ։ Սակայն որքան առաջինի նկատմամբ մամուլը միաձայն աշխատանք ու հետաքրքրութիւն է ցոյց տալիս, երկրորդը որոշ ուղղութիւնների կողմից կամ լռութեան է մատնվում և կամ, որ աւելի վատն է, յարձակումների ու անվայել նկատողութիւնների առարկայ է դարձել հէնց սկզբից։

«Տարօրինակ է իրօք ու շատ ցաւալի, որ հայ մամուլի ներկայ աւագ օրգանի նկատմամբ ինքը մամուլը, որ ամենից առաջ պէտք է աշխատէր իր պաշտօնակցի, թէև գաղափարով տարբեր, տօնը նշանաւոր դարձնել, աշխատում է վարկաբեկել, ժողովրդի աչքում ձգել տօնի նշանակութիւնը, որովհետև թերթի կառավարիչների հետ ինչ-ինչ հաշիւներ ունի, թերթը կապում է խմբագրի հետ, որը ժամանակաւոր երեւոյթ է, մինչդեռ թերթը որոշ ուղղութեան, որոշ հասարակական հոսանքի արտայայտութիւն է, իսկ այդ ուղղութիւնը կայ և կը մնայ դեռ, քանի որ գաղափարը թարմ է, քանի որ պաշտպանած սկզբունքը արժէքաւոր է»։

Ապա խօսելով այն մասին, որ մեր մամուլը բանակռիւը մղում է ոչ թէ գաղափարական, այլ անձնական հողի վրա, թերթը ասում է.

«Մի այլ հանգամանք ևս խոտելի է այս դէպքում. այդ՝ անհամբերութեան ոգին է, որով վարակված են մեր բոլոր ուղղութեանց ներկայացուցիչները առանց բացառութեան։ Հանդիսանալով որոշ կուսակցութեան, գաղափարի պաշտպան՝ թերթը իր անմիջական պարտքն է համարում անպայման մնացած բոլոր ուղղութիւններին վնասակար, անպէտք հրատարակել, իրան է վերագրում հասարակութեան երջանկութեան բաղդը տնօրինելու մենաշնորհը, որով ցոյց է տալիս, թէ իրանից դուրս բոլորը կորած են, կամ կրկնում է լռելեայն այն այլանդակութիւն դարձած խօսքը, թէ «արտաքոյ Հռոմի չիք փրկութիւն»։

Եւ բացատրելով, թէ պէտք է յարգանքով վերաբերվել ամեն մի համոզմունքի, նա կցում է.

«Այս իսկ տեսակէտից, կարծում եմ, մամուլը իր պարտքը պէտք է համարէ ջերմագին վերաբերմունք ցոյց տալ «Մշակի» յօբելեանին, որին կարող է որոշ դէպքերում չը համակրել, բայց չը պէտք է մոռանայ, որ այդ թերթն էլ որոշ ուղղութեան բերան է, որոշ գործ կատարել է և ունի իր առողջ սաղմերը։

«Հակառակութեան գլխաւոր պատճառն այն է համարվում, որ իբր թէ «Մշակի» ներկայ ղեկավարները հեռացել են հիմնադրի սկզբունքներից, որ դաւաճանել են Արծրունու գաղափարին։ Սակայն ով ծանօթ է թերթի անցեալ պատմութեանը, եթէ անաչառ դատէ, կը տեսնէ, որ հիմնական սկզբունքների մէջ փոփոխութիւն չէ եղել, որ նկատված շեղումները ժամանակի ոգու պահանջներ են։ Մի թէ Արծրունին ինքը իր սկզբունքները չէր սրբագրում համաձայն ժամանակի պահանջի. մի թէ նա չէր սխալվում իր վերաբերմունքի մէջ դէպի այս կամ այն հասարակական ազգային հարցը և ապա խոստովանում իր սխալը և ուղղում. մի հանգամանք, որ հրապարակախօսին պատիւ կը բերի և ոչ ընդհակառակը։ Ո՞վ մեզանից երաշխաւորել կարող է, որ եթէ թերթի

բեան, գործածութեան մէջ մտավ 1584-ին։ Նիկիական ժողովից յետոյ մինչև այդ տարին տեղի ունեցած սխալն ուղղելու համար՝ 10 օր բաց թողին այդ տարվայ օրացոյցի մէջ (հոկտեմբերի 4-ին յաջորդեց հոկտեմբերի 15). իսկ այնուհետև Յուլեան տոմարի սխալի առաջն առնելու համար՝ սահմանվեց, որ նահանջ չը համարվեն այն տարիները, որոնք վերջանում են երկու զրոյով, բայց չորս հարիւրի վրա չեն բաժանվում (օր. 1700, 1800, 1900 թվականները)։ Այս Գրիգորեան տոմարը ընդունված է եվրոպական երկրներում (բացի Ռուսաստանից և մանր երկրներից), Ամերիկայում և այլն։ Ներկայումս Գրիգորեան օրացոյցը մեր Յուլեան օրացոյցից 13 օրով առաջ է. մինչ մեզ մօտ մարտի 10-ն է՝ Գրիգորեան տոմարով 23-ն է։ Այս տարբերութիւնը կը մնայ մինչև 2099 թվականը, իսկ 2100-ին կը դառնայ 14 օր, 2200-ին 15 օր և այլն։ Բայց աւելի հավանական է, որ Յուլեան տոմարին հետևող ազգերը ընդունեն Գրիգորեան տոմարը, (կամ աւելի յարմար սիստեմ եթէ սահմանվի ապագայում)։

Համեմատելով հայոց տոմարական տարին (=365 օր) Յուլեան տոմարի տարուան (=365 օր 6 ժամ), կը տեսնենք, որ հայոց տարին աւելի կարճ լինելով՝ 4 տարվայ մէջ մի օր առաջ պէտք է անցնէր Յուլեան տարուց, այսինքն նրա Նավասարդի 1-ը եթէ, դիցուք, այս-ինչ թվականին հանդիպել էր սեպտեմբերի 5-ին՝ 4 տարի յետոյ պիտի հանդիպէր սեպտ. 4-ին, 4 տարի յետոյ սեպտ. 3-ին և այլն, և այսպէս շարունակաբար 4 տարվայ մէջ մի օր առաջ ընկնելով՝ 365×4 կամ 1460 տարվայ ընթացքում դարձեալ պիտի գար հասնէր նոյն սեպտեմբերի 5-ին, բայց բոլորելով 1461 տարի։ Այս պատճառով հայոց այս տոմարը, կամ մեծ թվականը, կոչվեց նաև շարժական տոմար, որովհետև նրա Նավասարդի 1-ը, ուրեմն և միւս ամիսները, ինչպէս և ամիսների հետ կապված բոլոր եկեղեցական տօները շարժական էին, կարող էին հանդիպել տարվայ որևէ ամսի որևէ օրվան։ Շարժական տոմարից առաջ եկած խառնաշփոթութեանը դարման տանելու համար Սարկավագ վ.-ը 1116 թ. սահմանեց անշարժ տոմար, որ սկսեց հաշվի առնվել 1084 թվականից (երբ լրանում էր տոմարական 532-ամեակը՝ սկսած հայոց թվականից), և հավասար էր Յուլեան տոմարի տևողութեան, այսինքն 365 օր 6 ժամի։ Անշարժ տոմարով՝ հայոց Նավասարդ ամսի 1-ը հանդիպեց Յուլեան տոմարի օգոստոսի 11-ին և այնպէս էլ շարունակվում է մինչև այսօր։ Անշարժ տոմարը, որ կոչվում է նաև փոքր տոմար կամ սարկավագիր՝ գործածութեան մէջ մտավ, եկեղեցական տօները կարգավորելու համար, տոմարների, յայսմավուրքի մէջ և այլն, իսկ հասարակական, քաղաքական կեանքում շարունակեց գործածվել մեծ կամ շարժական տոմարը, և հայոց 961=Քր. 1512 թվականը, որի մէջ կամ որի համար տպված է Պարզատոմարը՝ հայոց մեծ, կամ շարժական տոմարի թվականն է։

Այս գիտնալուց յետոյ հեշտ է հաշվել, թէ հայոց 961 թվին Նավասարդի 1-ը Յուլեան տոմարի ո՞ր օրվան է հանդիպում։ Քանի որ ներկայ 1912-ին (հայոց 1361 թվականին) շարժական տոմարի Նավասարդի 1-ը հանդիպում է օգոստոսի 5-ին*) հայոց 961 թվականին (Քր. 1512-ին), այսինքն մեզանից 400 տարի առաջ, նա 100 օրով յետ պէտք է լինէր (որովհետև այս 400 տարվայ ընթացքում 100 անգամ նահանջ տարի չը հաշվելով՝ մի-մի օր առաջ է անցել Յուլեան տարուց)։ Օգոստոսի 5-ից 100 օր յետ գնալով՝ (օգոստոս, սեպտեմբեր...) կը հանդիպենք Նոյեմբերի 13-ին, այսինքն՝ հայոց 961 թվականին Նավասարդի 1-ը հանդիպել է Քր. 1512 թվականի նոյեմբերի 13-ին։

Նոյն թիվը կը ստանանք՝ եթէ հաշվենք հայոց թվականի սկզբնավորութեան տարուց (Քր. 552 թվականից), երբ Նավասարդի 1-ը հանդիպել է յուլիսի 11-ին։ 961 տարին պարունակում է 240 նահանջ տարի, ուրեմն 961 տարվայ ընթացքում Նավասարդի 1-ը 240 օր առաջ է անցել Յուլեան տարուց. արդ՝ յուլիսի 11-ից 240 օր առաջ գնալով (յուլիս, յունիս, մայիս...) դարձեալ կը գտնենք նոյն Նոյեմբերի 13-ը։

Ստուգելու համար այս հաշիվը և ցոյց տալու համար, որ մեր հին գրքերում հայոց տոմարը հաշվված էին մեծ, շարժական տոմարով և ոչ թէ անշարժ կամ սարկավագիր տոմարով՝ բերում եմ մի քանի համադրութիւններ հայոց և Քր. թվականների և ամսաթվերի, քաղելով այն յիշատակարաններից, որ մէջ են բերված Ն. Զարբհանալեանի «Մատենագիտութեան» մէջ։ Այսպէս՝ «Եռանկիւնաչափութիւն» գիրքը տպված է «յամի 1810-ի նոյեմբերի 5, ՌՄԾԲ (1252) ի սահմի 7» (եր. 173). որով այդ թվին Նավասարդի 1-ը հանդիպում է օգոստոսի 30-ին։ «Ջերմածութիւն» գիրքը տպված է «յամի տեառն 1705, իսկ ըստ հայոց 1154, օգոստոսի 7, մարգաց 5» (եր. 371). որով այդ թվին Նավասարդի 1-ը հանդիպում է սեպտ. 26-ին։—«Նոր կտակարան» գիրքը տպված է «ի թուին Փրկչին 1668, փետրվարի 10, իսկ ըստ հայոց ՌՃԺԷ (1117), տրէի 25» (եր. 502). որով այդ թվին Նավասարդի 1-ը հանդիպում է հոկտեմբերի 18-ին։ «Ժամագիրք առհնի» տպված է «յամի 1642... և ի թվին հայոց ՌՂԱ (1091)... յամսեանն հայոց արէի երեք և հռովմայեցւոց յունվարի երկոտասան» (եր. 218—9), որով այդ թվին Նավասարդի 1-ը հանդիպում է հոկտեմբերի 11-ին։ Զանց եմ առնում ուրիշ քաղվածքներ նոյն գրքից (եր. 371, 223, 601, 606, 400, 401 և այլն), որոնք թէպէտ նոյնպէս համապատասխան են վերոյիշեալ հաշվին, այլ կարօտ են մանրամասն բացատրութեան, որի տեղը չէ։ Բերված օրինակները ցոյց են տալիս, որ քանի ներկայից գնում ենք դէպի անցեալը այնքան էլ Նավասարդի մէկը շարժվում է յետ՝ դէպի օգոստոսի վերջը, սեպտեմբեր, հոկտեմբեր, այնպէս որ հայոց 961 թվին, նոյն այդ թվերով էլ հաշվելով, Նավասարդի 1-ը կը հանդիպէր նոյեմբերի 13-ին։ Նրանք դարձեալ ցոյց են տալիս, որ տարեթիվը նշանակելիս՝ մեր նախնիք ի նկատի են ունեցել շարժական մեծ տոմարը և ոչ թէ անշարժը *)։

Ամփոփելով ասածներս՝ գալիս եմ այս եզրակացութեան, որ ներկայ տարվայ նոյեմբերի 13-ը ամենայարմար օրն է Պարզատումարի տպագրութեան 400-ամեայ դարադարձ համարելու։ Եթէ Պարզատումարը տպված է եղել 961 թվականի գործածութեան համար՝ ապա այդ օրը, նոյեմբերի 13-ին=Նավասարդի 1-ին, նա պէտք է գործածութեան մէջ մտնէր առաջին անգամ. եթէ նա տպված է եղել 961 թվականի մէջ՝ ուրեմն այդ թվականի Նավասարդի=նոյեմբերի 13, պէտք է համարվի յօբելեանական տարի։ Այս երկու դէպքում էլ 400-ամեակի տարին ընկնում է 1912-ին։ Այսպէս՝ ըստ հ. Գովրիկեանի դատողութեան և եզրակացութեան, որի վրա ենք հիմնում մեր դատողութիւնները՝ քանի որ ուրիշ աղբիւրներ պակասում են։

Այսպէս որոշելով Պարզատումարի տպագրութեան 400-ամեակի դարադարձի ամենայարմար օրը, նոյեմբերի 13-ը՝ պէտք է այդ օրվայ շուրջը որոնել գտնել տօնը կատարելու յարմար օր։ Լսել եմ, որ ընտրված յօբելեանական կարգադիր մասնաժողովը յարմար է համարել (միանգամայն տարբեր դիտումով՝ տօնը կատարել նոյեմբ. 3-ին, «ամենայն սրբոց, յայտնից և անյայտից» տօնի օրը, հոգեհանգիստ կատարելու համար հայոց տպագրութեան բոլոր յայտնի և անյայտ երախտաւորների համար։ Բանավոր միտք է։ Բայց գուցէ աւելի յարմար լինէր տօնը կատարել դեկտեմբերի 15-ին, Յակոբ Մծբնայ հայրապետի տօնի օրը, և հոգեհանգիստ կատարել առաջին հայ տպագրիչ «Մեղապարտ Յակոբի» համար։ Քանի որ տպագրիչ Յակոբը յիշվում է 1513 թվի տպագրութիւնների մէջ՝ նրա հոգեհանգիստը կատարելով դեկտեմբերի 15-ին մի կողմից Պարզատումարը կը կապենք յաջորդ չորս ընկեր գրքերի հետ, և բոլոր հինգ գիրքը մի մարդու ձեռնարկութիւն կը ճանաչենք, և միւս կողմից 1912 և 1913 թվականները իրար կը մօտեցնենք հնարաւորութեան չափով և աւելի կը մօտենանք յօբելեանի իրական անկասկածելի թվականին, որ է 1913-ը։

Ստ. Մալխասեանց

---

*) Տես օրացոյց Վենետիկի և Երուսաղէմի։ Էջմիածնի օրացոյցը շարժականի և անշարժի ամսաթվերը խառնել է իրար և երկուսի համար էլ նշանակել է Նավասարդի (=օգոստոսի) 11-ին...։

*) Այս է, համառօտ կերպով, իմ գիտցածը հայոց տոմարների մասին, որով հայոց 961 թվականը սկսվում է 1512 թվի նոյեմբերի 13-ին։ Իսկ պ. Լէօն ինձ վերագրում է ուրիշ գիտութիւն. նա ինձ ուղղում է այսպիսի խօսքեր. «Հաւատամ, որ դուք չը գիտէք, թէ 961 թվականը սկսվել է 1512-ի ամառը։ Հաւատալ չեմ կարող... Անգէտ ձևանալ նոյնիսկ ամենատարրական բաների՝ մարդկանց խաբելու համար...»։ Ուրեմն պ. Լէօն, երբ ամենատարրական բան, գիտէ, որ հայոց 961 թ. սկսվում է 1512-ի ամառը, գիտէ նաև, որ ես էլ այդ բանը գիտեմ, բայց մարդկանց խաբելու համար չը գիտցող եմ ձևանում։ Որ պ. Լէօն անտեղեակ է մեր տոմարների հաշվին և սխալ գիտութիւն կամ տգիտութիւն է ցոյց տալիս այս հարցում՝ այդ իր գործն է. բայց որ այդ իր սխալ գիտութիւնը կամ տգիտութիւնը վերագրում է ուրիշին ևս, և այս բարբաջանքը բարդելուց յետոյ դեռ խաբեբայ էլ է կոչում նրան, այդ արդէն աններելի է։ Ես առ այժմ ասում եմ. «Հրաժարիմք ի Լէօէ և յամենայն գիտութենէ նորա», իսկ նրա անպիտան մեթօդը—խաւարեցնել ուրիշների սիրտն ու միտքը—բերել գրական բարքերի այլանդակութիւն՝ կը բնորոշեմ մի ուրիշ անգամ։

հիմնադիրը այժմ կենդանի լինէր, հէնց այն ընթացքը չէր բռնի, ինչ որ այժմեան ղեկավարները ունեն։ Զի որ ժամանակները փոխվում են, հասարակական, ազգային պայմանները նոյնը չեն մնում, ուրեմն և նոյն գործելակերպը, նոյն մեթոդը չէ կարելի միշտ գործադրել։ Նոյն իսկ մանր խնդիրների նկատմամբ յաճախ մարդ արտաքին և ներքին երկաթէ պայմանների ազդեցութեան տակ ստիպված է լինում ասել, անել այն, ինչ որ առաջ այլ պայմաններում պախարակել է։

«Այսպէս ուրեմն նրանք, որոնք «Մշակի» ղեկավարներին մեղադրում են զանազան շեղումների, գաղափարի դաւաճանութեան մէջ, պէտք է չը մոռանան, որ այդ շեղումները անձնական քմահաճոյքների ու միտումների արդիւնք չեն, այլ առաջընթաց ժամանակի պահանջներ, որքան այդ շեղումները սկզբունքային նշանակութիւն ունեն»։

Ցօդուածագիրն ապա շօշափելով «Մշակի» այժմեան ղեկավարների՝ մի քանի հարցերի վերաբերմամբ ունեցած անձնական հայեցակէտերը՝ ասում է, թէ սկզբունքի խնդիրների քննութեան ժամանակ հակառակորդի անձնականը մէջ բերել և հրապարակական հարցի գլխաւոր նիւթ դարձնելը գծուծութիւն է ոգու, նեղսրտութիւն, աշխարհահայեացքի միակողմանիութիւն։

«Հասարակական որեւէ հիմնարկութեան գնահատութեան դէպքում անաչառ քննադատը, երբ տեսնում է որ հիմնարկութիւնը աւելի օգուտներ է տուել, քան վնաս, անպայման պէտք է խոստովանէ այդ օգուտը, տայ նրան գերակշռող տեղ, չը մոռանալով ի հարկէ պակասութիւնը, որը մատնանշելու է ոչ թէ պախարակելու, ծաղրելու դիտաւորութեամբ, այլ ուղղելու, ցաւը հեռացնելու բարի ցանկութեամբ։ Այս տեսակէտից նայելով խնդրին՝ կը տեսնենք, որ թերթը իր գոյութեան ընթացքում հասարակական գործ է կատարել, այնպիսի գործ, որը մեր իրականութեան մէջ իր արդիւնքները տուել է և օգուտը շօշափելի է այժմ»։

Ցոյց տալով, որ «Մշակը» մեծ շարժում առաջ բերեց մանաւանդ գաւառի մէջ, թերթը վերջացնում է իր յօդուածը հետեւեալ կերպով.

«Այդ շարժումն ըստ ինքեան կարեւոր էր մեր հասարակութեան համար, որովհետև իսկապէս դեռ ինքնագործունէութեան ուղին չէր բռնել մեր հասարակութիւնը, դեռ միահամուռ աշխատանքի կարեւորութիւնը համոզմունք չէր դարձել։ Կարեւոր է շեշտել մանաւանդ այն հանգամանքը, որ գաւառն սկսել էր շարժվել, մի տեղ, որը խստ անուշադիր էր մնացած և խուլ էր համարվում։ Նայեցէք այժմ «Մշակի» յօբելեանի առիթով հրատարակվող գրութիւնները և տեսէք, որ շատ-շատերը գաւառացիներ են, որոնք խոստովանում են, թէ իրօք իրանց հասարակական կեանքի կանչողը, գործի գնողը, հետաքրքրողը եղել է «Մշակը»։

«Մի առ մի թւել «Մշակի» կատարած դերը ընդհանրապէս՝ կը նշանակէ մեր 40 տարվայ պատմութեան գլխաւոր դէպքերը արձանագրել, որովհետև չէ եղել խնդիր, որին արձագանք չը տար թերթը, որի համար չը խօսէր։ Այդ կենդանի հետաքրքրութեան, հասարակութեան միտքը թարմ պահողը եղել է թերթը. իր ովսանն ու ղեկավար է հանդիսացել շատ հասարակական հարցերի։ Կարդացէք Լէօի Գրիգոր Արծրունի 3 հատոր աշխատութիւնը և կը տեսնէք, թէ որքան դեր է կատարել թերթը, որքան նեղութիւններ է ստանձնել նրա ղեկավարը, որքան սէր ու խնամք է կենտրոնացրել իր գործի մէջ։

«Այդ եռանդուն ոգու շնորհիւ նա իր ժամանակ ամբողջ հոսանք առաջ բերեց, մի տեսակ հմայեց իր շրջապատի մարդկանց, յատկապէս ստորին խաւերին, և այդ հոսանքը փոքրիկ շեղումներով շարունակվում է ցայսօր։

«Առանց համամիտ լինելու Արծրունու ռէալիստական ուղղութեանը, առանց համաձայնելու նրա հասարակական զարգացման մէջ ոչ ստուեճանական ընթացքը ընդունելուն, այնու ամենայնիւ պէտք է խոստովանենք, որ «Մշակը» կատարել է հասարակութեան մէջ որոշ օգտակար աշխատանք, որ նա այժմ էլ ունի իր յատուկ տեղը մեր մամուլում և բերան է հանդիսանում որոշ հոսանքի։ Այդ իսկ բաւական է, որ այդ յօբելեանը գնահատելի համարենք, ցանկանք աջողութիւն և աշխատենք, որ ըստ արժանւոյն տօնվի, որ ղեկավարները միշտ ազնւութեան ու համոզմունքով գործելու ուղին բռնեն և ժողովրդի անմիջական օգուտը դարձնեն իրանց թերթի ղեկավարութեան հիմքը։

«Ով ուրիշի համոզմունքը ըստ արժանւոյն յարգել գիտէ, նա է որ իրօք պաշտպանում է մտքի ու խղճի ազատութեան վեհ սկզբունքը»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մադրասա (Շամախ. գաւ.), 7 մարտի

Կարդացի «Մշակի» № 46-ում մեր գիւղի դպրոցի աւ.-ուսուցիչ Կ. Նարինեանի և ուսուցչուհի Պ. Տէր-Առաքելեանի՝ խմբագրութեանդ ուղղած նամակը։

Ես ամենայն սիրով ընդունում եմ ինձ ուղղված՝ ընկերական դատարանի առաջարկը։

Միայն մի հանգամանքի վրա կուզէի դարձնել իմ հակառակորդների ուշադրութիւնը։ Ինձ ընկերական դատի ձեռնոց շպրտած վարժապետ-վարժուհին անշուշտ մինչև իրանց «Նամակ խմբագրութեանը» գրելը ի նկատի՞ ունեցած կը լինեն իրանց դատաւորներին։ Արդ՝ ինչպէս է, որ պատրաստի դատաւորների անունները թագցնվում են, իսկ ինձանից պահանջվում է, որ ես առաջինը յայտնեմ իմ դատաւորների անունները։ Այդ կէտում մեր գիւղի ուսուցիչ-ուսուցչուհին պէտք է ներեն ինձ։ Իսկ եթէ իրանք ճիշդ են խօսում, որ խնայում են լրագրական սուղ էջերը, ապա թող առաջինը իրանք յայտնեն իրանց դատաւորների անունները։

Եւ թող շատ չը սպասեն, ինչպէս որ գրել են, այլ իրանց էլ թող յայտնի լինի, որ իմ ամբողջ էութեամբս ես ցանկանում եմ ընկերական դատարանի գլուխ գալը։

Ուրեմն՝ թող առաջինը իրանք ձեռք առնեն միջոցներ։ Հայրենակից

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Թաղիեվ-Բերուլթօվի գործը միայն Թաղիեվին նստեց աւելի քան 200,000 ռուբլի։ Դատապարտվածները ներկայացնելու են վճռաբեկ բողոքագիր։ Բոլորն էլ ազատ են գրաւականներով՝ Թաղիեվը, 200,000 ռուբլով, մնացածները 20 և 25 հազար ռուբլով իւրաքանչիւրը։

✦ «Пет. Газета»-ի մէջ տպված է անկէտա Թաղիեվի պաշտպանութեան գործում Մակլակովի հանդէս գալու առիթով։ Փաստաբանները, բացի Գեգեչկորիից, թոյլ են տալիս պաշտպանութիւնը։ Մի քանիսը ասում են՝ «ես գոնէ չէի գնայ»։ Կարաբչևսկին անթոյլատրելի է համարում պատգամաւորութիւնը փաստաբանութեան հետ։ Շինգարեվը հերքում է այն լուրը, երբ թէ այդ մասին կադետների ֆրակցիայի խորհրդակցութիւնը դատապարտում է Մակլակովին Զամըսլովսկիի հետ միասին գործելուն համար։

✦ Սև-ծովեան երկաթուղու հարցը սուր կերպարանք ստացաւ մինիստրների խորհրդի մէջ։ Հարցի լուծումը ներկայացված է Բարձրագոյն հայեցողութեան։

✦ Մոսկվայի մամուլի գործերի կոմիտէտը դատախազից տեղեկութիւն ստացաւ, որ դատաստանական պալատը, քննելով «Լ. Տօլստոյի նամակների ժողովածուի» գործը, որոշեց ոչնչացնել այդ ժողովածուից 14 նամակ։

✦ Պետական Դուման դռնփակ նիստում ընդունեց զինուորական բարենորոգման օրինագիծը։

✦ Ռուսաց արտաքին գործերի մինիստր Սազօնովը հանդէս է գալու Պետական Դումայում ապրիլի 10-ին և բացատրութիւններ է տալու ռուսական արտաքին քաղաքականութեան մասին։

✦ Պետերբուրգում եղած տեղեկութիւնների համաձայն՝ մեծ պետութիւնները կարողացել են հաւաստիացում ստանալ իտալական կառավարութիւնից, որ Դարդանէլի ռմբակոծութիւնը կը յետաձգվի մինչև որ վերջնականապէս պարզվէին մեծ պետութիւնների ձեռնարկած խաղաղ բանակցութիւնների հետևանքները։ Ներկայումս միջազգային դիւանագիտութեան ջանքերը կենտրոնացած են Կ. Պոլսում, ուր տեղի են ունենում եռանդուն բանակցութիւններ Բ. Դրան և Ռուսաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի և Աւստրո-Ունգարիայի ներկայացուցիչների միջև։

✦ Կ. Պոլսից հեռագրում են «Р. Сл.»-ին. «Լուրերի համաձայն, որոնց աղբիւրները մօտ են Բ. Դրան, Թիւրքիան զիջել է Ռուսաստանի պահանջներին՝ Թիւրքաց զօրքերը Ուրմիայից դուրս հանելու վերաբերութեամբ։ Այդպիսով միջադէպը համարվում է հարթված»։

✦ Գերմանական բարձր աղբիւրներից հաղորդում են, որ Վիլհէլմը մշակել է խաղաղութեան պայմաններ Թիւրքիայի և Իտալիայի միջև։ Այդ պայմաններով միաժամանակ կանոնաւորվելու են Թիւրքիայի յարաբերութիւնները դէպի Ուրմիայի միջադէպը հարթող պետութիւնները։ Ցոյս ունեն, որ Իտալիան կընդունէ յիշեալ պայմանները։

✦ Երզրումից շտապով դուրս են տարել թիւրքաց պետական գանձատան գումարները։ Այդ բացատրվում է Ռուսաստանի հետ յարաբերութիւնները բարդանալու երկիւղով։ Կ. Պոլսից սպասվում է 4-րդ զօրաբանակի հրամանատար Թուրխան-փաշան։

✦ Պարսից մինիստրների խորհուրդը իր արտակարգ նիստում 5000 թուման յատկացրեց սովեալների օգտին։

✦ Պարսից պետական խնամակալը «Н. В.»-ի թղթակցին յայտնեց, որ մէջլիսի ընտրութիւնները յետաձգված են մինչև երկրի հանգստութիւնը։

✦ Մեշեդում խոշոր անկարգութիւններ են։ Սպանված են մի քանի մարդ։ Նահանգապետը հրաժարվեց։ Առհասարակ ամբողջ Պարսկաստանում ռէակցիոն շարժումը ուժեղանում է։

✦ Եւրոպական վեց մեծ պետութիւնները բողոք յայտնեցին չինական հանրապետութեան նախագահ Իւանշիկայի բէլգիական փոխառութեան առիթով և պահանջեցին որոշ տեղեկութիւն տալ Չինաստանի ֆինանսական քաղաքականութեան մասին։

✦ Պէկինի շրջակայքում ազգաբնակութիւնը տանջվում է սովից։ Մի ամսվայ ընթացքում մեռան քաղցից 300 մարդ։ Ազգաբնակութիւնը յուզվում է։

✦ Ճապոնական մամուլը օրէ-ցօր եռանդով քարոզում է վճռական գործողութիւնների դիմել Չինաստանում։ Բոլորն էլ պնդում են Մանջուրիան գրաւելու վրա։

✦ Պէկինում գտնվեցին մի տան մէջ 179 ռումբ։ Կատարվում են համատարած ձերբակալութիւններ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

14 մարտի

ՕԴԵՍՍԱ։ Կալանաւորվեց Գօրդօնի խանութից (Պետերբուրգում) 165,000 ռուբլու գոհարեղէն յափշտակողներից մինը։

ԲՈՒԽԱՐԵՍՏ։ Տկարութեան պատճառով երկրորդ օրն է ինչ պառկած է թագաւորը։

ՎԷՐՆԻ։ Գիշերվայ ժ. 2 ու 57 ր. զգացվեց ուժեղ երկրաշարժ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Вечеръ»-ի խմբագիր Տարուրօն դատապարտվեց կէս տարով բանտարկութեան նրա համար, որ «Н. В.»-ի աշխատակից Մէնշիկօվի մասին գրել էր թէ կաշառված է աւստրիական դեսպանատնից և յօդուածներ է գրում ի վնաս Ռուսաստանի։

Բարձրագոյնս հաստատված որոշման համաձայն Գօլօլոբովի և Օբրազցօվի խնդրագրերը՝ քրէական դատ սկսելու Դումայի 34 անդամներին զրպարտութեան համար՝ յանձնվեցին Պետական Խորհրդի առաջին դեպարտամենտին։

ՍԱՐԱՏՕՎ։ Ապրանքատար գնացքի խորտակման ժամանակ ջարդվեցին 17 վագօն. սպանվեց մի կօնդուկտոր, ծանր վիրաւորվեցին երեքը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Աստղաբաշխ Գրիբօեդօվի գուշակութիւնները առաջիկայ գարնան եղանակի վերաբերմամբ անհանգստութիւն առաջ բերին գիւղատնտեսների մէջ։ «Россія»-ի տեղեկութիւնների համաձայն, մինիստրների խորհրդի նախագահը դիմել է Գիտութեանց Ճեմարանի Օգոստափառ նախագահին միջնորդելով կազմելու Ճեմարանին կից մի մասնաժողով Գրիբօեդօվի մեթօդների գիտնականութիւնը որոշելու համար։

ՏՕԿԻՕ։ Արձակուրդից վերադարձաւ ռուսաց դեսպան Մալեվսկին։

ՄՈՍԿՎԱ։ «Утро Россіи»-ն 500 ր. տուգանքի ենթարկվեց «Բաղդաւոր բօլէ Շալեապինի կեանքում» յօդուածի համար։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Высочайше Утвержденное Русское Общество Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Ձմերային երթեւեկութիւն
ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ
Մեկնում են Բաթումից

I Պօստային-մարդատար շոգենաւերը.
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով
Հինգշաբթի » 1 » » »
Շաբաթ » 12 » ուղղակի »
II Մարդատար շոգենաւերը.
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Շաբաթ » 2 » » »
III Մարդատար-ապրանքակիր շոգենաւերը.
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » » » »

Ժամերը Պետերբուրգի են։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՊՕՍՏԱՅԻՆ ԳԻԾ

Կանոնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի, Բօլգարիայի, Մակեդոնիայի, Սերբիայի, Անատոլիայի-Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։

ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ

Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ-Ռիգա, Լիբավա և Ռէվել։

Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում, Վելիամինովսկայա փողոց, № 18.

Հեռախօս № 11.

Ընդունվում են եւ ապահովացվում են ապրանքներ ձեռնտու պայմաններով։

Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց
(շ.) 0—40

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմերային երթեւեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ **արագ № 2 գնացքը**՝ (I, II և III կարգի վագօն.) 10 ժ. 20 ր. առաւ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 44 ր. կէսօր., Գանձակ՝ 3 ժ. 18 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 52 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 35 ր. երեկ., Բագու՝ 11 ժ. 43 ր. գիշ.։ **Մարդատար № 6 գնացքը**՝ (միայն I և II կարգի վագօն.) 3 ժ. 33 ր. ցեր., Աղստաֆա է հասնում 6 ժ. 29 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 46 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 53 ր. գիշ., Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 20 ր. գիշ., Բագու՝ 8 ժ. 11 ր. առաւ.։ **Պօստատար № 4 գնացքը**՝ (բոլոր կարգերի վագօններով) 11 ժ. 18 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 2 ժ. 12 ր. ցեր., Գանձակ՝ 5 ժ. 29 ր. առաւ., Եւլախ, 7 ժ. 30 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 12 ժ. 01 րոպէին կէսօրվայ, Բագու՝ 4 ժամ 52 րոպէին ցերեկվայ։ **Խառն № 106 գնացք**՝ (IV կամ III կարգի վագօններով, երբ կարևորութիւն պատահի) 6 ժ. 32 ր. առաւ., Աղստաֆա է հասնում 10 ժ. 42 ր. առաւ., Գանձակ՝ 2 ժ. 57 ր. ցեր., Եւլախ՝ 6 ժ. 25 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 16 գիշ., Բագու՝ 7 ժ. 12 ր. առաւ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **Մարդատար № 74/75 գնացքը**.՝ (բոլոր կարգի վագօններով) 11 ժ. 48 ր. գիշ., Ղարաքիլիսա է հասնում 7 ժ. 01 ր. առաւ., Ալէքսանդրօպօլ՝ 10 ժ. 31 ր. առաւ., Էջմիածին կայար.՝ 3 ժ. 45 ր. ցեր., Ուլուխանլու՝ 4 ժ. 12 ր. ցեր.։ (Առանց Երեւան մտնելու։ Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը Երեւան ուղևորվում է 4 ժ. 37 ր. ցեր., և Երեւան հասնում 5 ժ. 20 ր. երեկոյեան. Նախիջևան՝ 9 ժ. 26 ր. երեկ., Ջուլֆա՝ 11 ժ. 10 ր) երեկ.։ **Մարդատար-ապրանքատար № 78/79 գնացքը.** 5 ժ. 34 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում՝ 12 ժ. 48 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 32 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 4 ժ. 41 առաւ., Երեւան՝ 11 ժ. 06 ր. առաւ., և այլևս դէնը չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ **Մարդատար № 5 գնացքը**՝ (բոլոր կարգի վագօններով) 5 ժ. 45 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 51 ր. եր., Բաթում՝ 6 ժ, 26 ր. առաւ., **Պօստատար № 3 գնացքը**՝ (բոլոր կարգի վագօններով 9 ժ. 50 ր. առաւ., Միխայլօվօ է հասնում 1 ժ. 56 ր. կէսօր., Բաթում՝ 11 ժ. 13 ր. գիշ.։ **Մարդատար № 7 գնացքը**՝ (II և III կարգի վագօններով) 10 ժ. 38 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. 08 ր. գիշ., Բաթում՝ 1 ժ. 42 ր. կէսօրին։

ԲՈՐԺՕՄ՝ **մարդատար № 9/66 գնացքը**՝ (բոլոր կարգի վագօն.) 3 ժ. 23 ր. ցեր., Գօրի է հասնում 6 ժ. 02 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 02 ր. գիշ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ **Մարդատար № 5 գնացքը**՝ 5 ժ. 07 ր. երեկ.։ **Պօստատար № 3 գնացքը**՝ 8 ժ. 54 ր. առ.։ **Արագ № 1 գնացքը**՝ 9 ժ. 56 ր. գիշ., որը այլևս դէնը չէ գնում։ **Խառն № 107 գնացքը**՝ 9 ժ. եր.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պօստատար № 72/73 գնացքը**՝ 8 ժ. 25 ր. առաւ.։ **Մարդատար-ապրանքատար**՝ № 80/81 **գնացքը**՝ 1 ժ. 40 ր. ցերեկվայ։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **Մարդատար № 6 գնացքը**՝ 2 ժ. 50 ր. ցերեկ., **Պօստատար № 4 գնացքը**՝ 10 ժ. 28 ր. գիշ.։ **Մարդատար № 8 գնացքը** 5 ժ. 33 ր. առաւ. (այս գնացքը Բագու չէ գնում)։

ԲՈՐԺՕՄԻՑ՝ **Մարդատար № 6/10 գնացքը**՝ 7 ժ. 58 ր. առաւօտեան։

Ծանօթութիւն.—Ձմերային երթեւեկութեան միջոցին որոշված է Թիֆլիսից Պետերբուրգ (յետ և առաջ) անմիջական, առանց վագօն փոխելու հաղորդակցութիւն՝ Բագուի-Ռոստովի-Խարկովի վրայով Անդրկովկասեան գծի արագ №№ 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է մէկ միքստ վագօն I և II կարգի և մէկ վագօն III կարգի. բոլոր տեղերը պլացկարտերով են.

Նոյնպէս հաստատվում է Թիֆլիս-Մոսկվա յետ և առաջ, առանց վագօն փոխելու, հաղորդակցութիւն՝ Բագուի-Ռոստովի և Կօզլօվի վրայով՝ արագ № 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է Միջազգային ընկ. մէկ միքստ վագօն I և II կարգի, որի համար վերցվելու է յաւելեալ արժէք. ամեն մէկ հազար վերստին 8 ր. I կարգում և 6 ր. II կարգում։ Թիֆլիսից-Մոսկվա հաշվում է 2877 վերստ։

Առանց վագօն փոխելու հաղորդակցութիւնը Թիֆլիս-Բագու-Ռոստով յետ և առաջ կատարվելու է արագ № 1 և 2 գնացքներով։ Բոլոր կարգերի տեղերը պլացկարտով են։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 Ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.:
Գ. Ց. ԳՈՒՐԳԷՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ — 1—2 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—26

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

4711 ՄԱԶԵՐԻ ՆԵՐԿ
Ընկուզեայ էկստրակից
ներկում է մազերը արագ և հիմնաւոր, նայած ցանկութեան, քնքոյշ շիկագոյնից սկսած մինչև կատարեալ սևը։ Անվնասակար լինելը երաշխաւորված է։
Մի սրուակը 1 ր. 20 կ.: Մեծադիրը 2 ռուբ.:
Պարֆիւմէրիա № 4711 **Ֆերդ. Միւլհէնս**
Մատակ. Նորին Մեծութ. Ռուսաց Բարձր Դրան
ԿՕԼՆ Ռ. վ. ● ՌԻԳԱ
հիմնված 1792 թ.

(M. 28759/28782) 7—6

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
Ընդունելութիւնը ամեն օր) 10—11 ժ. առ. (երեխաների)) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. տէլէֆօն 388.
(չ.ու.կ.) 761. 100—89

ԲԺԻՇԿ
Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագէտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)
Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը:
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը:
Բէբուտօվսկայա, № 66.
(շ.ե.) 130. 100—81

Լոյս տեսաւ
ԱՐԵԱՆ ՁԱՅՆԵՐ
ԵՐԳԱՐԱՆ
Հինգերորդ տպագրութիւն
(Պահեստ «Գուտտենբերգ» գրախանութ.)
Գինն է 50 կ., պօստի ծախքով 65 կ., կազմած 1 ր.: Կարելի է մարկաներով:
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ". (ու.) 167. 2—2

Լոյս տեսաւ եւ վաճառվում է հռչակաւոր
Ֆրանսիացի գրող
ՎԻԿՏՕՐ ՀԻՒԳՕՅԻ
ԻՆՆՍՈՒՆ-ԵՐԵՔ
նշանաւոր վէպի հայերէն թարգմանութիւնը
„ԱՐՕՐ" ամսագրի
հրատարակութեամբ
—o—
Այս կլասիկական չքնաղ վէպը, որի նիւթը վերցված է ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից, պէտք է կազմէ ամեն մի մատենադարանի զարդը և լինի ընթերցանութեան ամենացանկալի նիւթ.
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Ի նկատի ունենալով, որ տպված է միայն 400 օրինակ, ուստի ցանկացողները պէտք է շտապեն վաղօրօք ստանալ, ուղարկելով իրանց պահանջը և դրամը «Մշակի» խմբագրութեան։
Գիրքը բաղկացած է 432 մեծադիր էջերից։
0—23

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւններից

1) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I	գ. 1 ր. —
2) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրձին, I և II հատորներ	1 ր. 50 կ.
3) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի	— 50 կ.
4) ՋՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ, վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի	1 ր. —
5) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի	— 40 կ.
6) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգօյի, թարգմ. Արշակ Սաֆարեանի	1 ր. 50 կ.
7) ԱՆԴԷՐՍԸՆԻ ՀԷՔԻԱԹՆԵՐԸ, թարգմ. Տ. Զաւէնի	— 50 կ.
8) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր. 20 կ.
9) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի	— 40 կ.
10) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բօրդօյի, թարգմ. Հ. Առաքելեանի	— 60 կ.
11) ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ, բժշկ. Գ. Բաբեանի	
I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն	1 ր. —
II » Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, բառարան	1 ր. 60 կ.
12) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի	— 50 կ.
13) ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՑՈՒԿՆԵՐԸ, Հ. Իբսէնի, թարգմ. Լ. Բաբայեանի	— 50 կ.
14) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, թարգմ. Հ. Առաքելեանի	1 ր. —
15) ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՇԵՄՔՈՒՄ, դրամ. էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Ք.-ի	— 40 կ.
16) ՆՇԱՆՎԱԾՆԵՐ, պիէս 3 գործ., Ալ. Արէլեանի	— 60 կ.
17) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, Լ. Ն. Տօլստոյի, թարգմ. Սուրխաթեանի	— 30 կ.
18) ԿՕՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), Լ. Ն. Տօլստոյի խմբագրութեամբ կազմեց Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրխաթեանի	— 7 կ.
19) ԱՍԱՑՈՒԱԾՔՆԵՐ ՄԱՀՕՄԷԴԻ, ընտրված Լ. Տօլստոյի, թ. Լ. Դանիէլեանի	— 5 կ.
20) ՑՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի	— 40 կ.
21) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (կենսագրութիւն), Ստ. Մալխասեանցի	— 20 կ.
22) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի	— 35 կ.
23) ԾՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով	— 15 կ.
24) ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ, Ե. Վ. Տէր-Մինասեանի	— 25 կ.
25) ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, թարգմ. Մ.-ի	— 15 կ.
26) ՃԱՊՕՆԻԱ կամ Ծագող Արեգակի երկիրը, Գ. Ի. Շրէյդէրի	— 25 կ.
27) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	— 30 կ.
28) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	— 25 կ.
29) ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԲԵՄՆ ԵՒ ԱՅԺՄ, Լէման Հաուպտի, թարգմ. Ի. Ցարութիւնեանի	— 20 կ.

Նրանք, որոնք կը դիմեն մեզ՝ պահանջելով վերոյիշեալ գրքերից 5 ռուբլուց բարձր գումարի՝ կը ստանան 25% զեղչ։ 10 ր. բարձր գումարի պատուէր տուողներն ստանում են 30% զեղչ։

«Մշակի» բաժանորդներից նրանք, որոնք վերոյիշեալ բոլոր գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն, կը ստանան 40% զեղչ։ 50—5

ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ։

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.